Արցախը ձեր տեսած երկրամասերից չէ, ձեզ լավ հաշիվ տվեք: Դուք չեք կարող ընկճել արցախցիներին. մենք անդըրդվելի ենք. մենք շատ ենք տեսել ձեզ նմաններին:

«ԱՐՑԱԽԸ» ՆԵՐԿԱՅԱՑՄՈՒՄ ԷՐ ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԻԵՐԸ

1918 թվականի սեպտեմբերի 25-ին (հին տոմարով) թուրքական բանակը գրավում է Շուշին և լայն հարձակումներ ըսկըսում Ղարաբաղի շրջանների վրա: Արցախցիները բոլոր հնարավոր միջոցները գործադրում են այդ հրեշտակոր հարձակման առաջն առնելու համար: Ուժի են ելնում տղամարդիկ և կանայք: Ակսվում են զանգվածային ժողովրդական ապստամբությունները: Առաջին մեծ հակահարվածը թշնամուն հասցվում է Մամնա գյուղի մոտ: Աշխատավորներն արյան գնով իրենց պապենական հողից դուրս են վանդում թուրքական հրոսակներին: 1918 թվականի նոյեմբերի վերջերին Ղարաբաղը մաքրվում է թուրքական օկուպանտներից: Սակայն մուսավաթա-

կանները շարունակում են իրենց սև գործը: 1919 թվականի սկզբին նրանք, անգլիացիների համաձայնությամբ, Ղարաբաղի գեներալ-նահանգապետ և նշանակում Խոսրով-բեհել Սուլթանովին (մասնագիտությամբ՝ բժիշկ), որը ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում հայ աշխատավորների նկատմամբ արյունավի դատաստան տեսնելու: Շուշի է ուղարկվում անգլիական միսիոնայուր Մակ-Մեզենի գլխավորությամբ: Մրանք ամբողջ երկրամասը վեր էին ածել սազմաբեմի: Ժողովրդին հալածում էին ամենադաժան միջոցներով, չկային ապրուստի միջոցներ, և կովել էին համաճարակային հիվանդությունները:

Արցախի աշխատավորները տոկունությամբ էին տանում բոլոր զրկանքները և միաժամանակ պատրաստվում վճռական գոտեմարտերի: 1918 թվականի հունիսի 22-ին ստեղծված Աղքային խորհուրդը, որը փաստորեն ներկայացնում էր հայկական երկրամասի ժողովրդական կառավարությունը, լայն գործունեություն ծավալեց՝ ցուց տալով, որ ոչ մի գեպքում չի ճանաշելու Աղրբեշանի կառավարության իշխանությունները:

Ահա այս լարված պայմաններում էլ, 1919 թվականին, Աղքային խորհուրդը ստեղծում է «Արցախ» անունով թերթ: Տպագիր այդ օրգանն արտահայտում էր հայ բնակչության կամքն ու ցանկությունը: Թերթը ուղղակի հայ մարդու մտածողությունն էր ներկայացնում՝ լրագրային տարրեր ժանրերով: Թերթի յութերորդ համարի էջում տպագրվում է «Ղարաբաղի հայ ժողովրդին» կոչը, որը միանգամայն օբյեկտիվ կերպով ներկայացնում է երկրամասում ստեղծված ծայրահեղ լարված վիճակը և ցուց տալիս, թե ովքեր են դրա մեղավորները:

Կոչի մեջ նշվում է, թե Ղարաբաղի հայ բնակչությունը ի՞նչ պետք է անի նման վիճակից դուրս գալու համար: Աղքային խորհուրդը և թերթի խմբագրությունը, դիմելով հայ բնակչությանը, կոչ են անում զգաստ լինել, ոչ մի կոմպրոմիս Աղրբեշանի կառավարության հետ, եթե նույնիսկ վերջիններս փորձեն աղրբեշանական գործերը մտցնել հայկական Ղարաբաղ:

Ղարաբաղի հայոց Աղքային խորհուրդը ոչ մի հույս չէր կապում զրսի ուժերի, մասնավորապես օտարերկրյա տերությունների հետ, գիտակցելով նրանց զավթողական, երկդիմի նկատառումները, թեև չի կարելի ժխտել, որ Աղքային խորհրդի առանձին անդամներ հավատում էին անգլիական կառավարությանը, որը հրապարակայնորեն հայ ժողովրդին համաշել է

իբրև իր գաղնակցի: Սա, իհարկե, միայն պատրանք էր. անգլիական կառավարությունը դիմել էր հերթական մանկրի՝ աշխատավորների աշքերին թող վշելու համար: Պատմությանը հայտնի են արևմտյան տերությունների բազմաթիվ խոստումներ՝ հայերին օգնելու, այսպես կոչված «Հայոց հարցը» լուծելու համար, բայց, վերջին հաշվով, որանք միշտ մնացել են լոկի խոստումներ: Ղարաբաղի բազմաշարար աշխատավորությունը որևէ ակնկալություն չուներ ո՛չ գեներալ թուսոնից, ո՛չ մայոր Գիբբոնից և ո՛չ էլ ուրիշներից: Նրանք Աղրբեշան էին եկել շատ պարզ հաշվիներով՝ իրենց կամքը թելաղրել Ղարաբաղի հայ բնակչությանը: Աղքային խորհուրդը կոչի մեջ շեշտում է, որ հայերը ամենից առաջ պետք է հույսը դնեն իրենց ուժերի վրա, որ ղարաբաղյինները կգործեն անձնուրաց՝ մեծ նախնիների դրոշին ներբռու: «Թո՛ղ ձեզ հովանի լինեն ձեր քաջազուն և իմաստուն նախնիները», — ասվում էր կոչում:

«Արցախը» ընթերցողներին պատմում էր երկրամասի անցյալի մասին, այն մասին, թե ինչպիսի քաջագործություններ են կատարվել Ղարաբաղում՝ նույնիսկ ոչ հեռավոր շրջանում: Թերթի 2-րդ, 4-րդ և 7-րդ համարներում զետեղված «Սոտիկ անցյալից» ծավալուն հոգվածի մեջ կոնկրետ փաստեր են բերվում Աղրբեշանի տարրեր շրջաններում և զյուղերում տեղի ունեցող աղքամիջյան ընդհարումների, գողությունների, սպանությունների մասին: Խոսքը կոնկրետ էր և փաստարկված: Հայ բնակչության նկատմամբ ատելության սահման չճանաչելով՝ աղրբեշանցիները դիմում էին ամենազգագրելի միջոցների, որ հատուկ չէ մարդկային ցեղին: Թերթը ստիպված էր այդ մասին ասել՝ ցավ զգալով հարեանների անարգել խաժամուժությունների, վայրենությունների առթիվ:

«Արցախի» էջերում լուս էին տեսնում հաղորդագրություններ Շուշիում և նրա մերձակա գյուղերում տիրող վիճակի մասին: Թերթը չէր թաքցնում ընթերցողներից այն ամենը, ինչ կատարվում էր բորբոքված, շիկացած մթնոլորտում: Անասնակառությունը, որպես խորհիկական հիվանդություն, շարունակվում էր հարևան աղբերիների կողմից, շեշտում է հայ պարբերականը, և հայերի կողմից ձեռնարկվող միջոցները ցանկացած արդյունքը չեն տալիս»:

«Արցախի» էջերում քիչ չէին այնպիսի նյութերը, հայտա-

բարությունները, որոնք փաստորեն կոչ էին՝ ուղղված երկու հարևան ժողովուրցներին:

Մեծ էին և Աղքային խորհրդի, և նրա տպագիր օրգանի ջանքերը Արցախում դրությունը շիկացած Հունից դուրս բերելու համար: Նրանք ձեռնարկում էին բոլոր հնարավոր միջոցները, անում այն ամենը, ինչ կարող էր ձեռնարկել ժողովրդական կառավարությունը:

Օր-օրի Աղբեջանի մուսավաթական կառավարությունը շարունակում էր ուժեղացնել ճնշումը Արցախի հայ բնակչության վրա: Բայց քաջազուն արցախցիները, որոնց ուժն ու բանականությունը, մարդկային բարեմասնություններն ու առաջինությունները աշխարհին են հայտնի, գոտեավնդվում էին մի գաղափարով՝ Ղարաբաղը հայկական է և ոչ մի կապ չպետք է ունենա Աղբեջանի հետ: Թերթի նյութերը նոր ուժ ու կորով էին հերարկում յարաքանչյուր ղարաբաղցու:

Երկար տարիներ ուսումնասիրելով հայրենի եղերքի՝ անզուգական Արցախի մամուկի պատմությունը, մեզ չի հաջողվել ի հայտ բերել «Արցախի» բոլոր համարները (պահպանվել է թերթի առնվազն յոթ համար), բայց արխիվներում եղած մի քանի համարների նյութերը մեզ համոզում են, որ թերթը չէր դավաճանում իր իսկ ընդունած սկզբունքին իրականությունը ներկայացնել ճշմարտացի, փաստերը՝ հավաստի, կոնկրետ, շարադրանքը՝ հոգեհարազատ արցախցուն:

«Արցախի» մյուս առավելությունն այն էր, որ նրա խոսքը հասնում էր շատ հայաբնակ վայրեր. այն կարդում էին Հայաստանում, Հյուսիսային Կովկասում և այլուր:

Շատ ժամանակ թերթը «Մամուլ» խորագրի ներքո հաղորդումներ էր տպագրում հայատառ պարբերականներից, որոնք զորավիգ էին լինում նրա հայացքներին և լուսաբանում էին հայ ժողովրդի անցյալն ու ներկան:

«ԱՐԱՔՍԸ» ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Երկրորդ տարին է, ինչ թեհրանում լուս է տեսնում զրական, մշակութային, հասարակական «Արաքս» ամսաթերթը (զիկավոր խմբագիր՝ Հակոբ Գրիգորյան), որը փաստորեն ար-

ցախյան շարժման ծնունդ է և, բնականաբար, իր նյութերի զգալի մասը նվիրում է Արցախի, Անդրկովկասի իրադարձություններին: Պարբերականի խոսքը ի տարբերություն մի շարք թերթերի և ամսագրերի, ակտիվ է, վերլուծական, երկկողմանի փաստերով հաջեցած այն իմաստով, որ իր հետևողական ու եղանակումներն անելիս օգտագործում է այլ կարգի և այլ լեզվով, առաջին հերթին իրանց պարբերական մամուկի էջերում հրապարակված նյութերը, ցուց տալիս կամ իր համերաշխությունը, կամ իր հակառակ կովանները:

«Արաքսը» ընդհանրապես բարձր է գնահատում ճշմարտացի խոսքը, գտնելով, որ զանգվածային ինֆորմացիայի միջոցները կոչված են մարդկանց ճիշտ կողմնորոշելու բարդ իրադրության մեջ, ասելու նրանց ճշմարտությունը, առաջ մղելով արդարության հաղթանակի համար պայքարը:

Ահա թե այս տարվա 34-րդ համարի «Իրանյան մամուլը և Աղբեջանի անցուգրածերը» խմբագրականում ինչ է գրում «Արաքսը». «Մամուլը արձագանք տալով բոլոր իրադարձությունները, պետք է որդեգրի անկողմնակալ կեցվածք, միաժամանակ համակողմանիորնն ներկայացնելով եղելությունը: Այն պետք է խուսափի շինուած և խելաթյուրած լուրեր տարածելուց, որպեսզի մեկ կողմից առիթ շընծայի անակնակալ անխորժելի դեպքերի ծագմանը, մյուս կողմից հագուրդ տա ընթերցողների ծառավին:

Իշարկե, մամուլը նույնքան որ կարող է օգտագետ լինի, միևնույն շափով կարող է հակառակ ազդեցությունը խաղալ, երբ քանդիչ ուղղություն որդեգրելով, պղտորի հանրության մտքերը»: Այս տեսանկյունից նա դրական է համարում իրանյան «Քեյչան» օրաթերթում հայտնի հրապարակախոս Ռմիկ Մասուրի մի հոդվածը, որտեղ ասված է. «...Խորհրդային Աղութեցանի հարցը առայժմ ազգայնական կամ ճշակութային-կրոնական հարց լինելուց առաջ, ներքին մի հարց է, իսլամական ժանրապետությունը պաշտպանում է աղբեջանցիների իսլամական ձգտումները: Սակայն այս սատարումը ներկա պայմաններում ավելի դրական արդյունքի պիտի հասնի, եթե այդ կատարվի Խորհրդային Միության հետ ունեցած համաձայնությունների շրջանակում, քան թե բախումները թեժացնելով, որ անկասկած, երկու երկրների օգտին էլ չի լինելու: Զգուշ լինենք

և խուսափենք հապճեպ վերնագրեր տպագրելուց և վերլուծություններ կատարելուց...»:

Ինչպես նկատելի է, «Քեյ՞ան» պարբերականը բոլորովին էլ կողմ չէ, որպեսզի թեժացնեն բախումները հայերի և աղքածանցիների միջև, այլ հարցը պետք է լուծվի քաղաքական առումով, կը որ սեղանի շուրջը բանակցելով՝ առանց նախնական պահանջների:

«Արաքսը» միաժամանակ շեշտում է, որ արցախյան իրադարձյունները ճշմարտացիորեն չեն լուսաբանում իրանական առանձին թերթեր («Ռեսալաթը», «Զոմեկորի էսլամին», «Քելալաթը» «Աբրամը» և ուրիշներ), ընթերցողներին հրամցնելով այն միտքը, թե իբր հայերը ձգտում են «հայկական համաշխարհային պետության ստեղծմանը»: Ավելին, նրանք հայերին համարում են ոռուսների գործակալ: Նրանք ինչ մեղադրանք ասես, որ չեն ներկայացնում արցախյաներին և, ընդհանրապես, հայերին, գրելով, թե հայերը ոռուսների միջոցով ուղղում են հասնել «հայոց ծավալապաշտությանը» և որ նրանց մեղքով է, որ կոտորվեցին շատ աղքեցանցիներ ու փախուստի դիմեցին երկու հարյուր հազարից ավելի աղերիներ՝ իրենց դարավոր հողից: Վերը նշված թերթերում խոսքը զնում է այն մասին, որ իբր ոռուսների շնորհիվ հայերը զինվում են Աղքածանի հողերը զավթելու համար:

Հայ ընթերցողը զղածիդ է լինում այս հերցուրանքը լսելուց, զարմանալի կերպով իրավիճակը Անդրկովկասում ներկայացվում է ծուռ հայելու մեջ, հակառակ կողմից: Այն մեղադրանքը, որ հասցեագրված է հայերին, իսկ և իսկ վերաբերում է աղերիներին. Նրանք են, որ ձգտում են յուրացնել կամ արդեն յուրացրել են հայկական հողերը (առաջին հերթին նկատի ունենք Արցախը և Նախիջևանը), նրանք են, որ սովոր են մարդասապանության, արյունախում կոտորածների: Մի՞թե այդ պարբերականները տեղյակ չեն Սումգայիթի, Բաքվի, Կիրովարադի, Խոջալուի, Շուշիի և այլ արյունալի դեպքերին, հայասպանություններին, զարդերին, կողոպուտին, թալանին...:

Մի՞թե Արցախի ազգային-ազատագրական պայքարը կարելի է որակել որպես որիշի հողերը զավթելու փորձ հարց է տալիս «Արաքսը»:

«Արաքսը» քննադատում է՝ այն թերթը, որոնք նպատակամդված խեղաթյուրում են հայ-աղքածանական ընդհարումները,

ինչպես հարկն է շեն բացահայտում արցախյաների պահանջատիրությունը՝ մայր Հայաստանի վերամիավորվելու համար: Հայ պարբերականը հարց է տալիս. ինչո՞ւ շեն դատապարտվում նման ոճրագործ հեղինակները, որոնք ձգտում են պղտոր զրի մեջ ձուկ որսալ, արտահայտել իրենց տերերի կամքը, հազարավոր ընթերցողներին ճշմարտությունն ասելու փոխարեն մատուցել մտացածին բաներ, որոնք հեռու են իրական լինելուց:

«Արցախյան վերազարթոնքի երկրորդ ամյակի առթիվ» հոդվածում «Արաքսը» նշում է, որ իրադարձությունները Անդրկովկասում զարգացած սրբնթաց կերպով. «աղերի պանթուրքիստները քաջալերվելով Խորհրդացին Միության Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի անարդար որոշումով..., անցյալից ավելի զորեղ զգալով իրենց, անամոթաբար կազմակերպեցին և ի կատար ածեցին նորանոր քստմնելի ոճիրներ՝ կոտրած, թալան և կրկին շրջափակում...

Հարձակման հնթակա հայությունը մեկ անգամ նորից ազերի մոլեկանդրության դիմաց, լուս հանդիսատեսի դերում գտավ Խորհրդացին Միության իշխանություններին: Ուստի հենվելով իր սեփական ուժերին, և պաշտպան ունենալով մեկ կողմից հայրենի զավակներին ու պետականության, մյուս կողմից՝ բովանդակ սիյուռքահայության, շարաշար պարտության մատնեց թշնամունք:

«Արաքսը» քննադատում է կենտրոնական իշխանությունների քար լուռթյունը, որոնք արցախյաներին կամ սին խոստումներ են տալիս, կամ մեղադրում: Ինչո՞ւմն է բանը. բանն այն է, նշում է հայ պարբերականը, որ Մոսկվան պաշտպան շի կանգնում հայերին՝ իբրև ԽՍՀՄ ժողովուրդներից մեկին, որը հարկանների կողմից շարունակում է շրջափակման մեջ գլունգել լբացել Արցախ տանող ճանապարհները և մինիմումի հասցնել օդային թիկլքները: Այո՛, Մոսկվան է այն հիմնական մեղադրը, որ արցախյան պարզ ու հստակ պրոբլեմը խորացրել է, բարդացրել, դարձրել «անլուծելի»: «Արաքսը» բացեիքաց գրում է. «Մոսկվան, որ հիմնական պատասխանատուն է նկատվում արցախյան հարցի այս աստիճան բարդացմանը, այս անգամ նաև լուռթյուն պահպանեց, մինչև այն ժամանակ, եթե աղերի պանթուրքիստներին շտապ օգնության հասավ Թուրքիայի ֆաշիստ վարչակարգը իր նյութական և զիմնորա-

կան կրկնապատիկ օժանդակություններով։ Հատկանշելի է, — շարունակում է հիշեցնել թերթը ընթերցողներին, — որ հունվարի 14-ին նաև միանույն վարչակարգի կողմից Անկարայում մի սիմպոզիում կազմակերպվեց, որտեղ պահանջվում էր «Խորհրդային Ազգբեջանի անկախությունը»։

Հայ պարբերականը շքը կարող անտարբեր անցնել լրատվական այն միջոցների հաղորդումների կողքով, որոնք կենտրոնական իշխանությունների և խորհրդային բանակի միջամտությունը Բաքվի իրադարձություններին համարում են հայանապատ և մարդասիրական։ Բայց նրանք քաջատեղյակ չեն, ընդգծում է «Արաքսը», որ այդ միջամտությունը ոչ թե հայերի կոտորածին վերջ տալուն է ուղղված, այլ Ազգբեջանի մայրաքաղաքում և այլ շրջաններում խորհրդային իշխանությունը տապալելու վտանգը չեղոքացնելուն։ «Մոսկվայի իշխանություններն արդեն պանթուրքիզմի վտանգը ուղղակի իրենց մորթուվրա զգալով, փութացին բանակի ուժով միջամտել հայ-ազրբեջանական բախումների ծայրաստիճան լարված կացությունը հանդարտացնելու։

Կարմիր բանակի այս քայլը, — շարունակում է «Արաքսը», — խորհրդային Ազգբեջանի և որոշ երկրների լրատվական գործակալությունների կողմից հայտարարվեց հայանուաստ մի քայլ՝ մինչդեռ Մոսկվան մեկ քարով երկու թոշուն որսալու քաղաքականությամբ փորձեց մեկ կողմից չեղոքացնել ազերի պանթուրքիստների խափանարարությունները և մյուս կողմից կեղղել հայ ժողովրդի արդարության ձայնը, որ բարձրացրել է հանուն Արցախը Հայաստանին վերակցելու։

«Արաքսը» հետևողականորեն շարունակում է լուսաբանել արցախան իրադարձությունները, ցուց տալ հարկան ազերի կողմից անելանելի վիճակի ստեղծումը, հայերին իր հայրենի օջախից վտարումը, ամբողջ երկրամասում ռազմական դրության պահպանման վնասները և այլն։

Թերթը նշում է, որ ողբերգություն է, եթե խորհրդային բանակի կողմից կողմնակալ մոտեցում է նկատվում դեպի ազերի ները և, ընդհակառակը, դաժան վերաբերմունք՝ հայերի նկատմամբ։ Դա, ինչ խոսք, մեծ վրդովմունք և խոր կսկիծ է առաջբերում մարզի հայ աշխատավորության շրջանում։

«Թեև ալդ մասին շատ է զրվել և ասվել, սակայն նույն վերաբերմունքը շարունակում է միայն խորհրդային բանակի գոր-

ծունեության տեսադաշտում», — գրում է «Արաքսը»։ Մի՛թե հայերը որևէ վիրավորանք են հասցըրել խորհրդային բանակաշիններին, հարցնում է պարբերականը։ Ի՞արկե, ոչ։

Արցախիները բարի, աշխատասեր, հերոսական, անհողդողդ ժողովուրդ են, օժտված մարդկային բացառիկ բարեմասնություններով, այլևս ոչինչ չի կարող խոշընդոտել նրանց ազգային-ազատագրական շարժմանը և նրանք լի են անկոտրում կամքով՝ մինչև վերջ դիմակայելու արհավիրքներին և հասնելու իրենց բաղադալի ժամին։ Բայց սարսափելին այն է, նշում է իրանահայ պարբերականը, որ խորհրդային երկրում չեն լուծվում ազգամիջան հարցերը, դրանց տալիս են երկրորդական նշանակություն։ Եվ պետք է նաև դրանով բացատրել, որ Խորհրդային Միությունում հետզհետե կորչում է մարդկանց հավատը ապագայի նկատմամբ։

Միանգամայն ճշմարիտ են հնչում «Արաքսի» եզրակացուները Արցախի մասին։ Արցախը պետք է ազատագրվի հարեվանների բռնատիրական աքցաններից և վերամիավորվի իր մորը։ Սա է արդարությունը։ Թո՛ղ բոլորը իմանան, որ Արցախի հարցը հողի հարց չէ, և ոչ էլ տարածքի վերամիավորում, արցախիները հողի հարց չէ, և ոչ էլ տարածքի վերամիավորում, արցախիները ուղում են ապրել հայեցի, հարազատ ժողովրդի հետ։

ԿԵՂԾԻՔ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ

(Թերթելով նորաբուն Ազգերայշան» թերթի համարները)

Ազրբեջանն այն հանրապետություններից է, որը չի կարող պարծենալ իր պարբերական մամուլի պատմությամբ, թեև Զիյա Բունիաթովը տարբեր առիթներով թմբակահարում է, թե այժմյան Ազրբեջանում լույս է տեսել 160 անուն պարբերական։ այս թիվն էլ տասնապատիկ մեծացված է։

Սա՝ իմիշիահոց։

Վերջերս թաքվում սկսել է լույս տեսնել «Ազրբերայշան» անունով մի թերթ, որի ճակատին նշված է. «Ազրբեջանի միասնականություն և սուլերենություն», «Ղարաբաղի ժողովրդական

կազմկոմիտեի օրգան», «Թերթը հիմնադրվել է 1918 թվականին» և այլն:

Թարգվում է, որ Արցախում 1918 թվականին ադրբեջաներն հրատարակվել է վերը նշված անունով թերթ: Սա բացարձակ կեղծիք է: Զիի կասկածում, որ 1918—1920 թթ. Բաքվում լույս է տեսել մուսավաթների օրգան «Ազերբայչան» թերթը, որը արտահայտում էր իր տերերի կամքը և այսօրվա նման ծայրահեղ հայատյացությունը էր սերմանում այսուայնտեղ:

Թացում ենք Ադրբեջանի Հանրապետարանը. «Ադրբեջան» անվան տակ նշված են երկու պարբերականներ. մեկը, որը լույս է տեսել 1918 թ. ադրբեջաներն և ֆրանսերն, եղել է իրանի սոցիալ-դեմոկրատների օրգանը, մյուսը՝ ուստի և ադրբեջաներն մուսավաթների օրգանը:

Առաջին հայացքից գժվար է ասել, թե այսօրվա «Ազերբայչանը» գրանցից որի շարունակությունն է: Բայց թերթելով Ֆորպարբերականի հենց միայն հունիս ամսվա համարները, պարզ է դառնում, որ այն մուսավաթների պարբերականի շարունակությունն է մեր օրերում:

Հիրավի, անհնար է հանգիստ սրտով ծանոթանալ նրա «հյութերին», որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ուրույն սուս, հերյուրանք մի ժողովով մասին, որ դարերի ընթացքում անլուր տանջանքների է ենթարկվել թուրքերի կողմից:

Պաշտոնական նյութերից բացի, 1990 թվականի հունիսի 17-ի համարում տեղ է գտել «Պաշտպանենք Հանրապետությունը» նամակը, որի տակ իրենց ստորագրությունն են դրել «Հայրաշխություն» միության նախաձեռնող խմբի շորս անդամներ, եզր ի՞նչ են գրում նրանք, իբր Մոսկվայում և արտասահմանում հայերը շարունակում են հակաադրբեջանական սադրանքներ, որի հետևանքով էլ Հայաստանում 200 հազարից ավելի ադրբեջանցիներից ոչ մեկը չի մնացել (այստեղ էլ, ինչպես միշտ, թվերը ուրեմնացված են): Եվ ահա, իբր Բաքվի ուսւախոս բանվորները ձգտում են իրենց ուժերը միավորել հարազատ հանրաշետության բարի անունը պաշտպանելու համար: Կարդում ենք, «Հայերը ձգտում են մեղադրել խաղաղամեր ադրբեջանական ժողովրդին ազգային և կրօնական անհանդատության համար, թեև հայտնի է, որ հենց Հայաստանից է սկսվել ավազակային հեռացումը իր հայրենի հողից ադրբեջանցիներին՝ մեր վերակառուցման էպոխայի առաջին փախստականներին»: Ինչ

անուն տաս նման կեղծիքին: Ո՞վ է սկսել ավազակային հարձակումը վերակառուցման նոր էպոխայում հայրը, թե՞ ադրբեջանցին: Ո՞վ առաջինը Սովորայիթում, Կիրովաբագում, Խոջալում, Շուշիում, Բաքվում և այլուր ցայց տվեց իր մարդատյացությունը, վանդալիզմի ծայրահեղ դրսերումները, ո՞վ ում դեմ է խոսում:

Նամակի հեղինակները գրում են. «Բավական է մնալ դիտողի գերում, եկել է ժամանակը օգնելու հանրապետությանը. Մեր հողը կարիք է զգում մեր պաշտպանությանը»: Մեկը հարցնի ուսւալեզու մարդիկ, ինչու անտարեր դիտողի գերում էիք, երբ ձեր աշխերի առջև Ադրբեջանի մայրաքաղաքում կոտորում էին հազարավոր հայերի, Մեզ հասած տեղեկությունների համաձայն ուսւալեզու հազարավոր մարդիկ արժանացել են հայերի բախտին և կենդանի մնացած տասնյակ հազարավորները թողել են «հարազատ», «բարի», «բազմազգ» թաքուն: Եվ այսօր մի խոսք չեք ասում երեկվա թոհուրո՞հ մասին: Ձեր ստորագրությունն է, արդյոք, այդ նամակի տակ, լավ նայեցեք ձեռագրին...»:

Ավելին, թերթի այդ նույն համարի առաջին և երրորդ էջերում տեղ է գտել Ադրբեջանի բժշկական ինստիտուտի ուսւալեզու կոլեկտիվի ներկայացուցիչների դիմումը ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորներին, որտեղ փաստերը ներկայացված են ուղղակի հակառակ ձեռվկ: Դուքս է գալիս, որ հայերը կոտորել և շարունակում են կոտորել ադրբեջանցիներին և որ այդ պատճառով իրենք հանգիստ չեն կարող ազրի խաղաղասեր թաքվում: Եվ այս ամենի մեղքը Ղարաբաղն է, նրա հայժողովուրդը: Ահա թե ինչու ուսւախունները բացականչում են՝ աձեռներդ հեռու կեռնային Ղարաբաղից»:

Լավ է ասված, «Ծառապիր գողին բռնել, թե չէ գողը ինքը կբռնի քեզ»: Եվ երբ կարդում ես այս դիմումը, զգում ես, որ ինչնի քեզ: Եվ երբ կարդում ես այս դիմումը, զգում ես, որ ինչնի քայլին, ուղղակի վերաբերում ինչ առված է Հայաստանի հասցեին, ուղղակի վերաբերում ինչ Ադրբեջանին: Դիմումի հեղինակները բողոքում են այն բանը պարբեջանին հայերաշխություն միջոցներ չի ձեռնարկում Հայաստանից զինաթափելու համար: Ինչպիսի հանդիպություն: Փոտանը զինաթափելու համար: Ինչպիսի հանդիպություն: Փոտանը ինստիտուտի ուսւախոս աշխատակիցները ճշմարտությունը նշեն, թե ինչու մինչև հիմա չի կատարվում պրեզիդենտի կառավարմանը և խորհրդակին կառավարության որոշումը վերացնելու շրջափակումը կեռնային Ղարաբաղի նկատմամբ՝ ստեղ-

ծելու ազատ երթևեկություն Հայաստանից Ադրբեջան, ընդհակառակը, ամբողջ մեղքը դնում են հայ գինված զոկատների վրա, որոնք ստեղծվել են անհրաժեշտաբար, այսինքն սահմանամբ շրջաններում ազրբեջանցիներից հայերին պաշտպանելու համար:

Այդ դիմումի մեջ ինչ ասես որ չի ասվում ԽՍՀՄ ժողովը դական պատգամավորներ Զորի Բալայանի, Թորիս Դադամյանի, Վաշագան Գրիգորյանի, Հենրիկ Պողոսյանի և Վահան Գաբրիելյանի մասին, կացնելով նրանց այլազան պիտակներ:

Թերթում հրապարակված է այսպես կոչված լՂԻՄ շրջանացին, քաղաքային կազմկոմիտեների «կանոնադրությունը»: Զարմանալ կարելի է, թե ինչ խոսքերով է սկսվում այս «կանոնադրությունը»: «Ընդհանուր հարցեր» վերնագրի տակ գրված է. «Շրջանի, քաղաքի տերիտորիայում կազմկոմիտեն հանդիսանում է միակ պետական իշխանության և կառավարության մարմինը, որը օժտված է Ադրբեջանի կոմկուսակցության շրջանային և քաղաքային կոմիտեների, ժողովրդական պատգամավորների շրջանային և քաղաքային խորհուրդների և նրանց գործադիր կոմիտեների լիակատար լիազորություններով»: Ահա, խնդրեմ, ուսցիունալ հատիկը այն ամբողջ «Հրահանգի», որ գրադեցնում է թերթի երկու էջերի գգալի մասը:

Հստ այդ «Հրահանգի», կազմկոմիտեն իրավահավասար է կուսակցության շրջկոմին և ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդին: Ո՞վ է ընտրել կազմկոմիտեներին՝ ոչ ոք: Դրանք ստեղծված են հրամանով: Այս է ազրբեջանական կողմի այսօրվա դեմոկրատիան, վերակառուցումը, ժողովրդավարությունը: Այս հիմունքներով էլ այսօր վերացված է Լեռնային Դարաբաղի Հադրութի շրջկոմը, շրջխորհուրդը:

Ինչ անուն տալ այս ամենին: «Ադրբեջան» թերթը այսօր հանդես է գալիս իրեւ Լեռնային Դարաբաղի հանրապետական կազմկոմիտեի օրգան և իր տերերի թելազրանքով ադրբեջանական կոմիտեն և ուսւերեն լեզուներով ամեն տեսակի սադրանքներ է տարածում Արցախի և Հայաստանի մասին, գտնելով, որ Արցախը էն վկիրք ոչ մի կապ շռնի և շպետք է ունենա Հայաստանի հետ:

Բանը հասել է այնտեղ, որ նորաթուխ պարբերականը կոչ է անում ընթերցողներին՝ օգնության գալ Արցախում հանգիստ վիճակ ստեղծելու համար: Մեկը հարցնի հայերն են Արցա-

խին «անհանգստացնում» թե՛, այսպես կոչված, «տերերը»՝ ազրբեջանցիները:

Կրկին թերթելով «Ադրբեջան» թերթի էջերը, զարմանում են, թե ինչպես կարելի է կեղծել բոլոր փաստերը՝ սկսած թերթի վերնագրից մինչև ստորագրությունը:

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄՅԱՆԻ «ԴԵՊԵՇԱՐԱՐ ԼԵՌԱՅԻՆ» Ա.Ա.ԲԱԴՈՒՄ 1917—1920 թթ.» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Արցախի 1917—1920 թթ. թեժ իրադարձությունները շատերի ուշադրությունն են գրավել: Առանձին մարդիկ, լինելով այդ ժամանակի գեղքերի անմիջական մասնակիցներ, ձգտել են թղթին հանձնել իրենց տեսածն ու զգացածը, երևությունների ճշշմարտապումը՝ հանգամանքների նկատմամբ ունենալով քըննական մոտեցում: Այդպիսի երկելի դեմքերից մեկն էլ Հարություն Թումյանն էր, Դարաբաղի նորաստեղծ ժողովրդական կառավարության ուսական կոմիսարը: Նա «Դեպեշերը Լեռնացին Դարաբաղում 1917—1920 թթ.» ձեռագիր աշխատության մեջ միանգամայն ճշմարտացի կերպով ներկայացրել է իր հայրենի աշխարհի իրավիճակը, հայ-ազրբեջանական հարաբերությունների սրման պատճառները տվյալ ժամանակահատվածում:

Հարություն Թումյանը զարգացած անձնավորություն էր, ավարտել էր Շուշիի հայոց հոգևոր թեմական, ապա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցները: Երկու տարի Դարաբաղիլիսայում և նրա մերժական գյուղերում աշխատել է որպես ուսուցիչ: Այնուհետև ընդունվել և փայլուն կերպով ավարտել է Փետերբուրգի առեւտրությունների հնատիտուտը, Կիևի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո վերադարձել է Շուշի՝ իր ծննդավայրը:

Հարություն Թումյանի գրին են պատկանում բազմաթիւ աշխատություններ, որտեղ լուսաբանվում են ոչ միայն ժողովրդական կրթության, կուլտուրայի հարցերը, այլև դիվանագիտական, քաղաքական պրոբլեմների մեջ կողմնորոշվելու, իրավիքագիտական իրադարձությունների մեջ կողմնորոշվելու, իրավիքագիտական գնահատելու կարողությամբ: Նա հստակ

փաստերի և բնութագրական օրինակների ուժով ներկայացնում
է մուսավաթական Ազգբեջանի զավթողական քաղաքականու-
թյունը, կոտորածը, արյունահեղությունը: Այդ ֆոնի վրա ուր-
վագծվում են Ղարաբաղի ժողովրդական կառավարության ան-
հետաձգելի միջոցառումները, Ազգային խորհրդի անդամների
եռանդուն գործունեությունը:

Հ. Թումյանի «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917—
1920 թթ.» ձեռագիր աշխատությունը ունի և ճանաչողական,
և իրադրությունը ճշմարտացիորեն ներկայացնող վավերագրի
արժեք, որի վերլուծական մակարդակը վկայում է հեղինակի
գիտական և քաղաքական հասունությունը: Նա բացեիրաց նշում
է, որ ազգբեջանական կառավարությունը ձգտում է վաստերը
ներկայացնել ծուռ հայելու մեջ, փորձելով ճշմարտության փո-
խարեն սուտը անցկացնել անամոթաբար, տուանց խղճի խայթ
զգալու եվ աճա, երբ թերթում ենք աշխատության ավելի քան
300 մեքենագիր էշերը, մեր առաջ ներկայանում է Արցախը ամ-
բողությամբ՝ 1917—1920 թվականներին:

Ինչպես վկայում է Հ. Թումյանը, 1917—1920-ական թթ.
Արցախը իր հովսերը կապում էր իր հետ: Նա ձգտում էր ա-
զատության՝ վեր պարզելով ազգային-ազատագրական պայ-
քարի գորշը: Նա պայքարում էր տնօրինելու իր ճակատագիրը
և ու թե գոյատելու ստրկական պայմաններում: Հեղինակը
փաստերի ուժով շեշտում է նաև, որ մյուս կողմը՝ Ազգբեջանը,
իր նպատակին համեմ համար միջոցների միջև խտրություն
չեր դնում, դիմում էր ամեն կարգի վայրագ քայլերի, ընդհուպ
արյունահեղություն սանձազերծելը:

Հ. Թումյանի տեքստում վառ կերպով երևում է դեռ 70
տարի առաջ արցախահայերի պայքարը մայր Հայաստնին վե-
րամիավորելու համար: Արցախցին չէր կարող հեռու մնալ իր
մայր ժողովրդից, նրա մշակութից, գրականությունից, ար-
վեստից...

1938 թվականից սկսած Երևանի բուհերում և մասնավորա-
պես հեռակա մանկավարժական ինստիտուտում լեզվագրական
ֆակուլտետի դեկան աշխատելու տարիներին Հ. Թումյանի
հետ իմ կապերը ավելի էր սերտ դարձել և այդ հանգամանքից
օգտվելով հեղինակի սույն ձեռագիր աշխատությունը կարդա-
ցել եմ քառորդ դար առաջ: Կարդալով այն մի կողմից մոտի-
կից ծանոթանում էի հայրենի եղերդի 1917—1920 թթ. իրա-

գարձություններին, մյուս կողմից, անկեղծ ասած, հիանում էի
հեղինակի տեքստով, նրա պատկերավոր լեզվով: Սովորական
աշխատություն չէ սա:

Այդ մասին իր դրական կարծիքն է Հայտնել 1917—1920 թթ.
Արցախը բուն իրադրությունների ակտիվ մասնակից, «նե-
ցուկ» թերթի (1917 թ. օգոստոս) խմբագիր Աշոտ Հովհաննիս-
յանը: Նա գրել է. «Ի վերը, Տարի եմ համարում վեր հանելու
քննարկվող աշխատության հեղինակի մի դիտողությունը, որը,
իմ կարծիքով, վերին աստիճանի կարենոր նշանակություն և մնի
խորհրդային պատմագրության համար: Նկատի ունեմ հեղի-
նակի բեղմնավոր այն միտքը, որ 1919—1920 թթ. Ղարաբա-
ղում տեղի ունեցած զինաբախումները օբյեկտիվորեն դրական
գիր կատարեցին Ազգբեջանի խորհրդայնացման համար: Ակ-
ներեաբար, Ղարաբաղի գեպքերը նույն գերն են կատարել 1920
թ. Ազգբեջանում խորհրդային կարգեր հաստատելու գործում,
ինչ գեր որ 1918 թ. Սարդարապատի ճակամատարտը Բաքվի
կոմոնայի պաշտպանության գործում: Գամելով մուսավաթա-
կան մարտական ուժերը Ղարաբաղում, հայ-ազգբեջանական
կոփվները հնարավորություն շէին տալիս մուսավաթականնե-
րին դիմագրություն ցույց տալու Հյուսիսային Կովկասից Ազգբ-
րեջանի սահմաններին մոտեցող կարմիր բանակին: Կարծում
եմ, որ խորհրդային պատմագրությունը պետք է որ այս իրո-
ղությունից համապատասխան հետևողություններ անի առաջի-
կայում»:

Հիրավի, ինչպես նշում է պատմաբանը, Հ. Թումյանի ձե-
ռագիր աշխատանքը ուսանելի շատ կողմեր ունի պատմական
փաստերը արժեքավորելու և գրանց ճիշտ գնահատական տալու
համար: Այս տեսակետից մեծ կարևորություն ունի հեղինակի
աշխատությունը արագորեն լույս ընծայելը: Այն գեռ 1965 թ.
հանձնված է եղել Հրատարակությանը և հասկանալի պատճա-
ռով մինչև հիմա լույս շի տեսել: Հեղինակը ժամանակին պըն-
գել է, որ նրա տպագրումը շատ հարցերի պատասխան կտա և
յուրավի օգնություն կլինի հայ պատմագրությանը՝ ճիշտ
պատկերացնում կազմելու 1917—1920 թթ. արցախյան իրադր-
ությունների մասին:

Եվ աճա այսօր, Հ. Թումյանի ծննդյան 100-ամյակի առ-
թիվ հայ մտավորականները երախտիքի ու շնորհակալության

շերմ խոսքեր են ուղղում Հիանալի մտավորականին, քաղաքական-լուսավորական գործչին:

«Դեպքերը կեռնային Դարաբաղում 1917—1920 թ.թ.» աշխատության հրատարակությունը հարգանքի արժանի տուրք կլինի հեղինակի հիշատակին:

ԲՈՂՋԻ ՆԱՄԱԿ ՏԱՍՍ-Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

Լավ եք որդեգրել ձեր նախնիների ոճը, ոչինչ չեմ կարող ասել: Երբ մի առիթով թերթում էինք 1905 թվականին լույս տեսած «Նովայա Ժիզն» լեզու թերթի համարները, նկատեցինք մի բան. թերթի ղեկավարությունը հրաժարվում էր տպագրել Պետերբուրգի հեռագրական գործակալության ինֆորմացիաները: Ինչո՞ւ, այն բանի համար, որ դրանք կեղծ էին, փաստերը շուռ տված, և ընթերցողներին ապակողմնորոշում էին երևութների, կատարվող իրադարձությունների մեջ:

Եվ, ահա, անցել է 85 տարի, ՌՈՒՍԱ-ի որդեգրած աշխատանքին մեթոդներն ու ձևերը կենդանի են ՏԱՍՍ-ի ապարատում: Ինչո՞ւմն է բանը: Բանն այն է, որ երկու և կես տարիների ընթացքում, զարաքայլան շարժման հենց առաջին օրեւրից մենք մի ավելորդ անդամ համոզվեցինք, թե ինչպես է ՏԱՍՍ-ը շուռ տալիս ճշմարիտ փաստերը, աղավաղում դրանք այնշափ, որպեսզի ընթերցողն ու ոմնկնդիրը շհասկանան՝ ինչումն է բանը, ո՞վ է մեղավորը, ո՞վ է արդարացին:

Հարյուրավոր օրինակներից բերեմ վերջին օրերինը. ՏԱՍՍ-ի ստորագրությամբ և՛ ուղիոն, և՛ հեռուստատեսությունը, և՛ ինֆորմացիայի այլ միջոցներ աշխարհով մեկ տարածեցին այն սկզբից մինչև վերջ կեղծիքը, թե իբր հայ գրոհայինները շրջապատել են Հաղորդի, Մարտունու, Ասկերանի շրջկոմների և շրջխորհուրդների շենքերը և թույլ շեն տալիս այնտեղ նորմալ աշխատանք կատարելու: Ուղղակի կարելի է ապշել, թե ՏԱՍՍ-ը ինչպես է նենգափոխում կատարված փաստը և այն ամենը, ինչ վատ է, վերաբրում է հայերին:

Փոխանակ ճշմարտությունն ասելու, նշելու այն մասին, որ երկրագնդի ոչ մի անկյունում այնպիսի սարսափելի բան չի կատարվում, ինչպես Արցախում, որտեղ հայ ժողովուրդը տա-

րիներ շարունակ տանում է թուրք-աղբյուրեցանցիների գաժան լուծը, հարստահարվում, ոտնահարվում, և այդ ամենը կենտրոնական իշխանությունների թողովության պայմաններում, ՏԱՍՍ-ը տարածում է այնպիսի հաղորդումներ, թե իբր հայերը թույլ շեն տալիս կարգ ու կանոն սահմանել մարզում, խանգարում են շրջկոմների և շրջխորհուրդների աշխատանքները: Դե արի ու տես, թե ինչպես է ՏԱՍՍ-ը ամեն ինչ տակնուվաանում, ձգտելով ձուկ որսալ պղտոր ջրում: Իրականում ի՞նչ է կատարվում: Կազմկոմիտե կոչվածը, որին հանրապետությունում ղեկավարում է Աղբյուրեցանի կուսակցության կենտկոմի երկրորդ քարտուղար Պոլյանիշկոն, զինված զոկատներով ներխուժում է հայկական մարզի ղեկավար մարմինների շենքերը և ղենքի ուժով վոնդում իսկական տերերին՝ նպատակ ունենալով մարզը «մաքրել» հայ ղեկավարներից, հայ բնակչությունից:

Կենտրոնական լրատվության միջոցները կուրորեն հաջորդում են ՏԱՍՍ-ի ինֆորմացիաները, որոնք հարյուր տոկոսով կողմնակալ են և կոչված են ամեն ինչում մեղադրելու հայկական կողմին:

Մարդ խելագարվել կարող է այդ անմարդկային հաղորդումներից, որոնք իսկ և իսկ իրականության հակառակ պատկերն են ներկայացնում: Մի՞թե վերջ չպիտի լինի այս ամենին, մի՞թե կենտրոնական և աղբյուրանական մամուլը, հեռուստատեսությունն ու ռադիոն պետք է շարունակեն իրենց հայատյաց պրոպագանդան, որ մղվում է անամոթաբար, բոլոր նորմերը գետնին տալով:

ՏԱՍՍ-ը վաղուց կորցրել է իր համարումը հատկապես հայերի և այն մարդկանց աշքում, որոնք քաջատեղյակ են նրա հադրությունների «ճշմարտության» մակարդակին:

Ինչպես կարող է մի մեծ երկրի պաշտոնական կենտրոնական գործակալության աշխատողը այդքան իշնել իր պաշտոնական վարկից և շամաշել իր հաղորդած հերյուրանքներից, սխալ, աղավաղված ինֆորմացիաներից:

Սովորաբար ասում են՝ սիի ոտքերը կարճ են, բայց այս անգամ երկար գուրս եկան: Երկու և կես տարուց ավելի է, ինչ հայ ընթերցողը կարոտ է մի ճշմարիտ խոսքի, որ պետք է հնչի ՏԱՍՍ-ի բերանով:

Ժամանակը մեծ ուժ ունի և ճշմարտությունը մի օր աշխարհին կասվի համարձակությամբ:

Զի եղել անմարդկային մի փաստ, որ մեզագրվի ՏԱՍՍ-ի կողմից, եթե այն կատարվել է Աղբբեջանի կողմից: Ընդհակառակը, փոքրիկ դրական փաստը փառաբանվում է մի քանի անդամ: Սա է ՏԱՍՍ-ի որդեգրած աշխատանքային ոճը, որ չակիս է 85 տարիներից ի վեր:

Ի՞նչ կարող եք ասել. երկրի ամենապաշտոնական զանգվածային լրատվության միջոցը ծայրահեղ սխալ ուղղությամբ է, որի դեմ ոչ չի բողոքում ոչ պաշտօնյան, ոչ ոռու մտավորականը, ոչ շարքային բանվորը, որ ապրում է թեկուզ երկրի ամենաթեժ կրակակետում: Կամ թե մենք բողոքում ենք՝ ինչ օգուտ դրանից՝ ոչ ոք չի լսում մեր ձայնը: Անմարդկային լուսիցուն, որ պատիվ չի բերում ոչ ոքի:

Այո, այսօր դարաբաղցին հիմաթափված է աշխարհից նաև այն պատճառով, որ պաշտոնական լրատվության կենտրոնուկան մարմինները աշխարհին չեն ասում ճշմարտությունը, այն մասին, որ արցախցին այլևս չի կարող ապրել աղբեջանցիների հետ, խզվել են բոլոր սահմանները, այրվել են բոլոր կամուրջները:

Մեզ մնում է ասել, որ չենք ճանաչում ՏԱՍՍ-ի հեղինակությունը, նրա խոսքը իրականությանը հակառակ է: Ավելին, վուխանակ մեղմելու իրավիճակը, շարունակում է բորբոքել երկու ժողովուրդների միջև առանց այն էլ շիկացած մթնոլորտը:

Մենք խորհուրդ կտայինք ՏԱՍՍ-ի աշխատողներին՝ հեռու մնալ Ղարաբաղից և Հայաստանի Հանրապետությունից: Ճեր գրածը միայն թշնամություն է բորբոքում: Մենք ձեղանից ոչ մի բան չենք ակնկալում: Հերիք է մեր մասին հերյուրանը տարածեք: Ամեն ինչ իր սահմանն ունի:

Մենք այլևս այն չենք, ինչ երկու և կես տարի առաջ էինք, շատ բանում համոզվեցինք և աշքներս բացեցինք:

ՄԻ ԿԵՐԾԻՔ ԵՎՑ

Ո՞Վ է ՄԻՐՋԱ. ՖԱՐՈՒԽՅԱՆ ԿԱՄ ՄԻՐՋԱ. ՅՈՒՍՈՒՖՅԱՆ

Աղբբեջանի պետական, գիտությունների ակադեմիայի և պահատարակությամբ լույս տեսած մի շարք գրքերում, մասնա-

վորապես «Աղբբեջանի պատմություն» եռահատոր (1958, 1960 և 1962 թթ. տպագրված) աշխատության մեջ և Փրիգուն Շուշինսկու «Շուշա» (1968 թ.) գրքում և պարբերական մամուկի էջերում երբեմն ընթերցողը հանդիպում է «Միրզա Ֆարզա» և «Միրզա Ֆարզա» անուններին, որոնք փաստորեն հանդես են գալիս իբրև տարբեր անձնավորություններ, տարբեր գործելակերպով: Աշխատությունների հեղինակներին ձեռնտու չէ, որ բացեն փակագծերը և շիտակորեն ասեն, որ այդ երկուսն էլ միմնուն անձնավորությունն է, որ մեծ ավանդ ունի Արցախի կուլտուրա-լուսավորական կյանքի շատ ասպարեզներում:

Հարևան հանրապետության «Գիտնականներին» բոլորովին էլ շահավետ չէ, որ շեշտեն Միրզա Ֆարզա գրիստոնյա լինելը, հայկական ծագումը և նրա հայանպատ ծառայությունը: Այսպես, «Շուշա» գրքում Ֆ. Շուշինսկին, որ ծանոթ չէ Արցախի նախկին կենտրոնի պատմությանը, շատ փաստեր աղավաղված ներկայացնելով, շատ հայերի աղբբեջանացնելով (Թաղեսու Թամրով, իվան Զամինարով, Ներսես Մելիք-Ալլախավերդիկի, Գ. Խանդամիրով, Բալա Օղիկ Գրիգոր, Արսեն Յարամիշև և տասնյակ ուրիշներ) նշում է միայն, որ Միրզա Ֆարզա պատմությունը, եղել է իրանի և նուսատանի միջև մղված պատերազմի ականատեսներից մեկը, երկար տարիներ աշխատել է Շուշիում պետական հիմնարկներում:

Երկարամյա մեր պրպտումները որոշ արդյունքի են հասցեր. Միրզա Ֆարուխը կամ Միրզա Ֆարզա միենալուն անձնավորությունն է, որի խսկական անունը Հարություն է, հայրանունը՝ Ներսես, գիտական աշխատությունների տակ ստորագրել է Հարություն Ղարաբաղցի:

Ծնվել է Դիզակի գավառի (այժմ ԼՂԻՄ Հադրութի շրջան—Ս. Ա.) Թաղուտ գյուղում, որը գտնվում է շրջկենտրոնից 15 կիլոմետրի վրա՝ Հարավ-արևմուտք: Այժմ բնակչությունը 200-ից անցնում է, որտեղ ապրում են Հարությունի շառավիղներից մի քանիսը:

Ծնդամենը 6—7 տարեկան էր, երբ սկսվեց 1805 թվականի սուս-պահսկական պատերազմը: Այդ ժամանակ նա գերվում է Պարսկաստան՝ ծառայության մտնելով արքունիքում: Սա պատհական երկուցի շէր, հայ պատանին արտակարգ ընդունակություններ էր դրսերել դպրոցում՝ հատկապես լեզուների ու-

սումնասիրման բնագավառում նա գերազանց տիրապետում էր ոչ միայն Հայերենին (աշխարհաբար, գրաբար և Արցախի բարբառը), այլև պարսկերենին, արաբերենին, գերմաներենին, ֆրանսերենին, անգլերենին և ուրիշ լեզուներին: Քսան տարեկան հասակում թիջրանի սարդարի քարտուղարն էր, որը փաստորեն խորհրդականի դեր էր կատարում:

Թեև Հարությունը ապահովված կյանքի էր արժանացել, բայց դա չէր նրա նպատակը, այլ Հայրենի ժողովրդին ծառացելը, Արցախին օգտակար լինելը: Ներկայանում է Հարմար առիթը. 1826 թվականի ոռու-պարսկական պատերազմի օրերին Հարությունին հաջողվում է փախչել Շուշի:

1827 թվականին Շուշից բազել քաղաքի ավետարանական-քարոզական ընկերության երկու երեկոյի ներկայացուցիչներ՝ Ավգուստ Դիտրիխն ու Ֆելիցիա Զարեմբան ձեռնարկումներ էին սկսել Շուշիում՝ երկար տարիների իրենց հավանած նստավայրում: Նրանք կառուցել էին եռարկանի մի շքեղ շինություն՝ իրենց հարմարավետ բազով և օժանդակ տնտեսությամբ: Շատ կարճ ժամանակամիջոցում Հայ երիտասարդը մտերմանում է բազելցի պրոֆեսորների հետ և օգնում նրանց հիմնելու տպարան ու դպրոց:

Ընթերցողը կարող է տարակում ել, այդ ի՞նչ մարդիկ էին, որ հեռու երկրից ժամանել էին Արցախ և ձգում էին Հայ ժողովրդին դաս տալ, գիրք հրատարակել, Հայ երեխաներին սովորություն դասաւողների մայրենի լեզու, գրականություն և այլն: Նրանց խսկարեցնել մայրենի լեզու, գրականություն և այլն: Նրանց իրենց գործունեությամբ, հատկապես տպական նպատակն էր իրենց գործունեությամբ, հատկապես տպագրությամբ, օգնել այլազավան ժողովուրդների շրջանում բրիսությամբ, ոգնել այլազավան ժողովուրդներուն: Սակայն սա չի նշանակում, թե բատոնեկություն տարածելուն: Սակայն սա չի նշանակում, թե բատոնեկությունը ոչ մի օգուտ չէր բերում արցախ-դեղիների նախաձեռնությունը ոչ մի օգուտ չէր բերում արցախ-դեղիներին. կարող ենք ուղղակի ասել, որ նրանք Շուշիում հիմք ցիւներին. կարող ենք ուղղակի ասել, որ նրանք Շուշիում հիմք ցիւներին գրատպագրությանը և առաջին զիրքը՝ «Պատմություն պրեցիս» լույս տեսավ 1828 թվականին:

Առավելություն էր նաև այն, որ եկեղեցական-քթիստոնեական գրքերի հետ միասին Հարություն Դարաբաղջին բազելցիների հետ ջանքեր թափեց լույս ընծայելու գիտական, ուսումնական աշխատություններ, գրական-գեղարվեստական գործեր: Հենց սկզբից նշենք, որ Հրատարակվող գրքերի 99 տոկոսը հայերեն էին և մի շնչին մասը՝ եբրայերեն:

Երիտասարդ Հարությունը փաստորեն բազելցիներին սովորեցնում էր Հայերենի համար և առաջարկում էր առաջարկությունը՝ սկզբանի համար առաջարկանությունը և առաջարկանությունը:

Իրեցնում էր Հայերեն և տեղական բարբառ՝ սկզբում Հանդիպանալով նրանց անմիջական թարգմանիչը, ժողովրդի հետ հաղորդակցման գրավոր և բանագործ օլակը:

Բազելցիների Հրատարակական գործի կենտրոնական դեմքը դառնում է Հարություն Դարաբաղջին: Նրա նախաձեռնությամբ 1829 թվականին Շուշիում լույս տեսավ «Համառոտությունն Հայկական քերականության» աշխատությունը, որը երկար տարիներ դպրոցներում ծառայում էր իբրև ուսումնական ձեռնարկ՝ մայրենի լեզվի համար: Այն բովանդակում էր Հայրենի առանձին քերականական սահմանումները, բառերի հոլովումները, խոսքի մասերի բնութագրումը, առանձին վարժություններ և այլն:

Անուրանալի է Հ. Դարաբաղջու ավանդը Հովսեփ Արցախցու աշխատությունների լույս ընծայման գործում: 1830 թվականին տպագրվեց Արցախցու «Համառոտ բառդիրք զրաբարից աշխարհաբար», 1840 թվականին՝ «Առաջին մասն փիլիսոփայության», որ ասի տրամաբանություն...» աշխատությունները, որոնց խաղացած գերը չի կարելի ոչ մի գեպքում նսեմացնել Հայագիտական գրականության պատմության մեջ:

Հերինակի հենց առաջին աշխատությունը՝ «Համառոտ բառդիրք», երկար տարիներ Հայկական դպրոցներում ծառայում էր իբրև անփոխարինելի բառարան՝ գրաբար բառերի աշխարհաբարի իմաստը Հասկանալու համար: Ըստ որում առանձին բառերի իմաստը մեկնաբանված է Համակողմանիորեն՝ հոլովական ձևերով և ձևաբանական մյուս առանձնահատկություններով:

Հարություն Դարաբաղջու նախաձեռնությամբ են լույս տեսնում Միքայել Չամչյանի «Քերականություն Հայկապյան լեզվի» (1833 թ.), Զ. Դ. Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» (1837 թ.) Հասան-Զալալալյան Եսայի «Պատմություն կամ Հիշատակ ինչին անցից՝ դիպելոց աշխարհին Աղուանից...» (1839 թ.), Կուշտուր Տեր-Օհանյանի «Համառոտ Հայկապյան քերականություն» (1839 թ.) և այլ արժեքավոր աշխատությունները, որոնք, անկասկած, ժամանակին մեջ ունեցել հատկապես արցախահայության հայագիտական ուսուցման գործում:

Բացի Հրատարակական բեղմնավոր գործունեությունից, Հարություն Դարաբաղջին պատմությանն է թողել գիտական մի շարք ուսումնասիրություններ, որոնց արժեքը չի կարելի թերագնահատել: Առաջին հերթին նրան հետաքրքրում էր իր Հայունի

Արցախի պատմությունը, և նա ուսումնասիրման է ենթարկում 18-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբներն ընկած իրադարձությունները, որոնք ուշագրավ են ոչ միայն Ղարաբաղի, այլև Հարցւան երկրների համար: Նա պատմական անցքերը դիտում է փոխկապակցման մեջ, քննական մոտեցում է ցուցաբերում երևույթների նկատմամբ և միայն ճշմարտությամբ ներկայացնում փաստերը: Պարսկերն զրած նրա տրակտատը՝ «Թարիխն-Սափի» անունով, փաստորեն մի բարելավված պատմություն է Արցախի մասին, որտեղ արժեքավոր տվյալներ են հաղորդվում ոչ միայն Շուշին Կաշարի հարձակումներից պաշտպանելու, այլև Իրանի հետ Ռուսաստանի պատերազմի մասին:

Հայ հեղինակի աշխատության մեջ, ի տարբերություն մյուս հեղինակների, օբյեկտիվորեն ներկայացված են այն երևելի անձինք, որոնք, հիրավի, որոշիչ դեր են խաղացել Արցախի պատմության մեջ:

Կան ոչ լիարժեք փաստեր այն մասին, որ Հարություն Ղարաբաղին զբաղվել է անվանի գրողների ձեռագրերի ուսումնամիջությամբ ու հրատարակմամբ:

Այսպես, Յ. Շուշինսկին իր «Շուշ» գրքում նշում է, որ իբր Միրզա Յուսիֆը (նա ինքը՝ Հարությունը — Ս. Ա.) 1828 թվականին առաջին անգամ հավաքել է Վագիֆի ձեռագրերը և մի շարք հայտնի բանաստեղծություններ և 1856 թվականին հրատարակել: Մեզ այս փաստը չի կարող համոզել, որովհետև Արցախում մինչև 1920 թվականը չի եղել աղբբեշանական ոչ մի տպարան, ոչ մի տառատեսակ, հետևաբար նաև՝ գիրք: Սա մտացածին բան է, ցուց տալու կամ ուսալեզու ընթերցողին համոզելու, որ Միրզա Յուսիֆը աղբբեշանցի է, ուրեմն և բզբաղվել է Վագիֆի ստեղծագործություններով: Մի բան միայն ճշմարտություն է, որ Վագիֆը ստեղծագործել է պարսկերեն և աղբբեշանական լեզվով ոչ մի տող ստեղծագործություն չունի և չէր էլ կարող ունենալ՝ պարզ պատճառներով:

Խոսք լինել չի կարող, որ իր կյանքի շատ տարիներ Հարություն Ղարաբաղին զբաղվել է թարգմանությամբ. դա առանձին հարց է, որ կարոտ է խոր ուսումնասիրման:

Կյանքի վերջին տարիներին Արցախում նա կատարում էր պետական ծառայություն. մտերիմ հարաբերություններ էր հաստատել Ղարաբաղի թեմի առաջնորդ Բաղդասար Հասան-Զա-

լալյանի հետ՝ Արցախում գրահրատարակությունը և դպրոցաշխնությունը առաջ մղելու համար:

Մետրոպոլիտի աջակցությամբ Հարությունը դասավանդում է Ղարաբաղի հոգևոր թեմական դպրոցում: Նրա սիրած առարկաներն էին լեզուները և պատմություններ:

Հարություն Ղարաբաղցին վախճանվել է 1864 թվականին: Պատմությունը որոշ տվյալներ է հաղորդում նրա որդու՝ Ներսեսի մասին, որը երկար տարիներ Մոսկվայի պետական համալսարանում իբրև պրոֆեսոր դասավանդել է քաղաքացիական իրավունք:

75 ՏԱՐՎԱ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ ՈՒԽԵՑՈՂ ԶԵՌԱԳԻՒ ՏԵՔՍՏՈՎ

(Կարդալով Ստեփան Ալաջաշյանի «Զսպիացած վերք»
վեպի երկու հատորները)

«Եյս վեպը համաշխարհային... պատերազմի, իմ ժողովրդի. հորս և իմ պատմության կենսապատկերի մի մասն է», — գրում է ճանաշված արձակագիր Ստեփան Ալաջաշյանը: Վեպի ըսկըզբում զետեղված «Խոսք ընթերցողին» ներածականի մեջ արձակագրը հաստատում է, թե ինչպես ծնվեց ստեղծագործությունը: Ապա որոշ պարզաբանում է տալիս, նշելով, որ «Համաշխարհային առաջին պատերազմում Մերձավոր Արևելքի իրադարձությունների պատմությանը նայել եմ փաստերի աշբերով և պատմության աշքերով՝ իմ ժողովրդի ճակատագրին: Չեմ մեղանչել: Գիտակցել, եմ, որ իմ ժողովրդի հանդեպ կատարվել է մի մեծ անարդարություն, և այդ անարդարությունն էլ պարտավորեցրել է ինձ գրել այս վեպը»:

Այո՛, Ստեփան Ալաջաշյանը նրանցից մեկն է, ով իրավունք չուներ շկրելու այս վեպը, չներկայացնել աշխարհին 1915 թվականի մեծ եղենը, որի գոհերն էին նաև Հեղինակի պատը, տառը, հինգ Հորեղբայրները, գերդաստանի հարսները, Հորեղբայրների զավակները, թվով 42 հոգի, որոնք չունեն շիրիմներ:

Վեպն ընդգրկում է 1912—1915 թթ. ժամանակահատվածը, երբ նախապատրաստվում էր և իրագործվեց Մեծ եղենը: Օս-

մանյան թուրքիան կոտորեց 1,5 միլիոնից ավելի հայեր, Հրեշտավոր նպատակ ունենալով լիովին բնաջինջ անել մի ժողովրդի, որը գարերին է տվել դասական մշակություն, գիր, դրականություն, գիտական մեծ ժառանգություն:

Հրապարակի վրա են վեպի երեք հատորներից երկուսը (1989—1990 թթ.): Առաջինում գործողությունների վայրը Բեռլին—Ստամբուլ—Կիլիկիա—Բաղդադ երկաթուղային դերի տարածքն է:

Վեպը վավերագրական-գեղարվեստական մի ամփոփ առեղծու գործություն է, որի հիմքում լնկած են հայկական, անգիտական, ֆրանսիական, թուրքական և ռուսական մամուլի էջերից քաղված նյութեր, ուշագրավ փաստեր...

Գրքի հենց սկզբից ուրվագծվում է Համիդ փաշայի հայացացությունը. «Հայոց հարցի» մասին խոսելիս նա բացառում է Հայաստանի գոյությունը, գտնելով, որ Հայերը իրավունք չունեն հայրենիք ունենալու, ազգ կոչվելու, և դրան հակառակ գերմանությի Բերթան սիրահարվում է հային՝ Շահենին, տեսնելով նրա մէջ այնպիսի մարդկային հատկություններ, որ հատուկ են միայն հայ ժողովրդին:

Վեպում սպանիշ խոսքեր կան ժեռն (երիտասարդ) թուրքերի «Ազատություն, հավասարություն, եղայրություն» կարգախոսի նկատմամբ, որ միշտ էլ հնչել է կեղծ, ծաղրական իշմաստով և, բնդհակառակը, գործնականում իշխել է «Թուրքիան՝ թուրքերին» նշանարանը, որ հնֆարում է «Հավասարակություն, սպանություն, ազգի ուրացում, համաթուրքացում»:

Հեղինակը ցնցող մանրամասներով է ներկայացնում Ստամբուլ՝ թուրքիայի մայրաքաղաքը: Հերոսուհիներից մեկը՝ Բերթան, այսպես է բնութագրում Ստամբուլը. «Ես ատում եմ այդ քաղաքը, որովհետեւ լի է քաղաքական և առևտրական պոռնիկներով, մարդասպաններով, պատանիների վաճառքով: Ատում եմ այդ քաղաքը, որ հարյուրավոր մզկիթներ ունի, բազմաթիվ սինագոգներ ու եկեղեցներ, անառակ կանանց օթևաններ, գիշերային ապաստաններ, պորտապարեր»:

Հեղինակը քայլ առ քայլ ընթերցողին համոզում է, թե ինչպես թուրքիայի պարագուխները պատրաստվում են թուրքերին «ազատել» հայերից՝ իրենց անհնազանդության, շենթարկվելու համար: Զորքեր են շարժվում գեպի հայաշատ վիլայեթներ՝ բարենորոգումների անվան տակ:

Այդ ծանր օրերին թալեաթի կեղծավորությունը այնտեղ էր գասել, որ դրվատելով թուրքիայի սահմանադրությունը, միաժամանակ դրվատում էր նրա քաղաքականությունը հայերի նկատմամբ, մինչդեռ ճշմարտությունն այն էր, որ նա հետո կազմակերպեց Աղանայի շարպը: Թուրքիայի տերերը վախեցած էին հայերի աճից, որ թուրքիայում ապրող Յ միլիոն հայերը շուտով կդառնան 10 միլիոն և ամեն կողմից կազմեն թուրքերի վուտ:

Հեղինակի երկրորդ հատորն ընդգրկում է օսմանյան թուրքիայում նախապատրաստված դավադիր ու դաժանագույն ծրագրերի իրագործման բուն ժամանակահատվածը: Թուրքական մամուլը բացահայտորեն գրում էր. «...Պետք է հայերին հասկացնել, որ անհախության կամ ինքնուրույնության հետաձուտ լինելով ԲնԱ.Զինօդ կլինեն...»:

Զուգացեն անցկացնելով 1915 թ. թուրքերի և այսօրվա Ազգաբեցանի պարագուխների գործողությունների միջև, զարմանալի կերպով հանդիպում են միատեսակ գործեակերպի. 75 տարվա վաղեմություն ունեցող ձեռագրով են գործում հարևան հանրապետության ղեկավարները՝ ծնկի բերել հայերին, ստիպել նրանց թուրքանալ, շխոսել հայերեն, հաշվեհարդար տեսնել անմեղ ժաղովողի հետ, շրջափակել, սովոր մատնել, ստիպել թողնելու հայրենի օշախները, ամեն ինչ կեղծել...»:

Այս՝ այսօրվա թուրք-ազգբեցանցիների հիմնական գենքը կեղծիքն է, պրոպագանդայի զանգվածային միջոցներով իրենց այնպիսին ներկայացնելը ինչպիսիք չեն կյանքում «հնտերնացինալիստ», «Բարի», «Ժողովրասեր», «Առաքինի» և այլն:

Ս. Ալաջաջյանի վեպում էլ իշխում է այն գաղափարը, որ թուրք-պագայնամոլները չեն կարող իրենց բուն նորատուիի մասին հայտարարել հրապարակայնորեն, նրանք գործում են մասին հայութարարություններով, մարդկագունի, մշակած ծրագրերով, նենդ մտադրություններով, մարդկագունի, անհայտ վանդալիզմի «օրենքներով»: Մի՞թե դրակությանը անհայտ վանդալիզմի «օրենքներով»: Մի՞թե դրակությանը չեն Սումբայիթը, Բաքուն, Կիրովաբադը, Շուշին, Խոջալուն...

Այս՝ այսօր լղիՄ-ը, Շահումյանի շրջանը, Գետաշենը կարծես գտնվում են թուրքիայում՝ 1915 թ. թուրք-ենիշերիների հրապակներով շրջապատված:

Վեպն ուսանելի շատ բան է տալիս ընթերցողներին, շնորհատակատալ ազերներին, միշտ պատրաստ լինել ինքնապաշտպա-

նության, ունենալ ամուր Հայաստան, միանական, ներգաշ-նակ մտածողությամբ կազմված ազգային ծրագիրը...

Կցանկանայինք վեպը մեսնել ոչ միայն ոռւսերեն, այլև աշ-խարհի շատ ու շատ լեզուներով:

ԲԱՅՆԱՍՏԱԿ ՀԱՅԻՔ ՄՈՒԱԼԻՄԻՆ

(Թերթելով «Բակինսկի ուարոշի» թերթի 1990 թ. սեպտեմբեր և նոյեմբեր ամիսների համարները)

1906 թվականի մայիսից Հարեան Հանրապետության մայ-րաքաղաքում լուս է տեսնում «Բակինսկի ուարոշի» թերթը, որը ժամանակին որոշակի դեր է խաղացել Անդրկովկասի կյանքում: Սակայն զարմանալի կերպով այն դիրքն ու դեմքը լիովին փո-խեց, երբ մի նոր մակարդակի հասավ արցախյան շարժումը: Ուղղակի ասենք, որ վերջին երկու-երեք տարիների համարների նյութերի գերակշիռ մասը նվիրված է Ղարաբաղի պրոբլեմին (թեև Հարեանները ժխտում են այդ պրոբլեմի առկայությունը): Ակամայից Հարց է ծագում. մի՞թե Աղրբեջանը, բացի Ղարա-բաղից, ուրիշ կարևոր խնդիրներ չունի, որոնք արժանի լինեն լայն լուսաբանման: Եվ, ահա, թերթում ենք այս տարվա սեպ-տեմբեր և հոկտեմբեր ամիսների համարները. յուրաքանչյուրի երկու-երեք էջերը կամ նվիրված են Ղարաբաղին, կամ այս ու այն կերպ արծարծում են ՂԴԻՄ-ի Հարցը: Հարեան կողմը ոչ մի միջոցի առջև կանգ չի առնում, որպեսզի վարկաբեկի Հայաս-տանը և Արցախը: Այդ նպատակով նա օգտագործում է այն բո-լոր մարդկանց, ովքեր ոչ միայն վատ են տրամադրված, այլև ուղղակի թշնամություն ունեն Հարեանների նկատմամբ:

Պետք է ունենալ ամուր զղեր՝ կարողանալու համար թեր-թել «Բակինսկի ուարոշի» էջերը: Մի տեղ պարսավագիր է Փ. Բորիլացկու, Գ. Բորովիկի և մյուսների դեմ (հոկտեմբերի 9), մի այլ տեղ, կամ մի քանի տեղ (հոկտեմբերի 4 և այլ համար-ներ) սուտ է համարվում անվանի Հայերի հացադուլը Մոսկվա-յում: Մի ամբողջ էջ է նվիրված այսես կոշված Աղրբեջանի հանրապետական կազմկոմիտեի նախագահ Վ. Պոլյանիշկոյի

հետ Հարցազրուցին, որտեղ նա պնդում է, թե «Ղարաբաղը ե-ղել և կմնա իրեւ Աղրբեջանի անբաժանելի մասը»:

«Բակինսկի ուարոշի» հոկտեմբերի 6-ի համարում զհտեղ-ված մի քանի նյութերի մեջ զժգոհություն է հայտնվում այն մասին, որ Ղարաբաղի նախկին ղեկավարները հարկավոր ու-շադրություն չեն գարձրել աղրբեջանաբնակ զյուղերին. Խիստ պակասում են խմելու ջուրը, նպարեղենը, դեղորայքը, կու-տուր-լուսավորական օջախները...

Թունուտ լեզվով է գրված Աղրբեջանական ԽՍՀ-ի դեպու-տատների նամակը երկրի ղեկավարներին, որ հրապարակված է թերթի սեպտեմբերի 23-ի համարում: Աղրբեջանական կողմը ուղղակի «Հայտնագործություն» է անում, «Թվերով ու փաստե-րով» ճգնում է համոզել միամիտ ընթերցողին, թե քանի՞-քա-նի՞ տարի է, ինչ հայերը ցեղասպանություն են կատարում ա-զրբեջանցիների նկատմամբ:

Սակայն տասնյակ նմանատիպ նյութերի մեջ առանձնանում է մեկը, որի կողքով չի կարելի անտարեր անցնել: Դա 1990 թ. սեպտեմբերի 27-ի համարում լուս տեսած մի հարցազրուց է Հարիբ Հասանովի հետ, մի հարցազրուց, որից թույն է կաթում: Ո՞վ է Հարիբ Հասանովը և ինչո՞ւ է նրա հետ հարցազրուց կազմակերպել «Բակինսկի ուարոշին»:

Հարիբ Հասանովը պատահական մարդ չէ: Երկար ժամա-նակ աշխատել է Հայաստանի կուսակցական մամուլում, եղել է «Սովետա-էրմանիստան» թերթի խմաբդիր, Հանրապետու-թյան կոմկուսակցության կենտրոնի անդամ, Գերազույն խոր-հըրդի պատգամավոր: Մի քանի տարի առաջ նա թողեց իր «սիրելի էրմանիստանը» և մենքնեց Աղրբեջան: Հեյդար Ալիևը նրան իսկույն պաշտոն տվեց նշանակելով Հայաստանին մեր-ձակա Ղազախի շրջկոմի առաջին քարտուղար: Հետո աշխատել է Հանրապետության կուսակցական և խորհրդային ղեկավար մարմիններում: Այժմ թշակառու է:

Հարցազրուցի սկզբում խմբագրությունը նշելով այս մա-սին, միաժամանակ շեշտում է, որ նա շատ լավ գիտե հայոց լեզուն և շարունակում է հետեւ Հարեան հանրապետության մամուլին, օգնելով Աղրբեջանի մամուլի աշխատողներին՝ ուժ-կահարված տալու հակառակորդ կողմին:

«Հրատապ հարցազրուց» խորագրի տակ Հ. Հասանովի խոսքը վերնագրված է՝ «Ինչու է Հայաստանին հարկավոր Ղա-

բարեղը...»: Տեսէ՞ք, թե ինչպես է «վաստակավոր լրագրող» վերնագրել իր հարցադրույցը: Նա ուզում է, վերջապիս, պատասխան տալ, ինչո՞ւ է Հայաստանը ձգտում, որ Արցախը լինի իր հետ միասին:

Առանց վրդովմունքի շի կարելի կարդալ այն:

Պարոն Հարիբ մոււալիմ. Հիրավի, Հայաստանը ձեզ շատ ծանոթ է, տասնյակ տարիներ գուք ապրել եք այստեղ և խմբագրել «Սովետ երմանիստանը»: Ոչ ոք ձեզ սառը իսոսք շի ասել և ձեր խմբագրած թերթի գրեթե բոլոր համարներում գրվատական խոսք եք ուղղել ոչ միայն Հարեւնի, այլև Հայաստանի հասցեին: Ձեր նյութերում «թափվում էր բարեկամությունը», և ինչգա՞ն-ինչքա՞ն հոգվածներ եք տպագրել Հայ-ադրբեջանական «բարեկամության» և «եղբայրության» մասին:

Դուք ցեխ եք շպրտում հայ ժողովեղի վրա, շեշտելով, թե հայերը ձգտում են «Մեծ Հայաստանի» կամ «Շովից ծով Հայաստանի»: Բ՞ով է այդ միտքը ձեր գլուխը մտցրել: Դուք մեղադրում եք Հայաստանի ղեկավարներին այն բանի համար, որ նրանք են տոն տալիս հայ «ազգայնամոլներին»: Դուք քաջ գիտեք, որ հայ ղեկավարների առաջին մեղքն այն է, որ Ադրբեջանից երեք անգամ փոքր Հայաստանի առանձին հողամասեր ժամանակին նվիրաբերել են «եղբայրական» Ադրբեջանին՝ իրեն ընծածած:

Երկրորդ, դուք հայերին մեղադրում եք այն բանում, որ ձգտում են Հայաստանին վերամիավորել փոքրիկ Արցախը: Մի՞թե դա ազգայնամոլության արտահայտություն է, մի՞թե ազատ ապրելը մեղք է ըստ ձեզ: Արցախի ժողովուրդը 70 տարի է, ինչ ստրկական լծի տակ է և ոչ մի կերպ չի կարողանում թոթափել այդ լուծը: Մի՞թե մարդուն կարելի է սպանել, այլանդակել, մորթել, այրել այն բանի համար, որ ուզում է ազատ ապրել: Հարաբեղին մեղադրում եք էքստրեմիզմի մեջ: Ո՞րն է Արցախի ազգայնամոլությունը, այն, որ զրկված է մարդուն վայել ամենատարական միջոցներով ապրելուց: Փակագերը բացելու համար շատ կերկարի իմ պատասխանը ձեզ: Ուղղակի ասենք, որ դուք մտածում եք ադրբեջանական ձեռվ, այսինքն՝ ազատ ապրել, նշանակում է ուրիշի ստրուկը լինել:

Դուք մեղադրում եք Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Վ. Մարգարյանին այն բանի համար, որ համարձակվել է ստորագրելու Արցախի ժողովուրդական տնտեսու-

թյան զարգացման ուղղությամբ որոշ գործողություններ կատարելու մի պայմանագիր: Դուք դա հանցա՞նք եք համարում:

Հարցադրույցի ընթացքում Հատուկ անդրադառնում եք իզոր Մուրադյանին, մեղադրելով նրան, որ իբր նա մի քանի անգամ հայտարարել է, թե չի կարող ինքնուրույն հանրապետություն գոյություն ունենալ միայն իր հնարավորություններով, առանց ուրիշի տերիտորիաների բռնագումման: Իզոր Մուրադյանը այնքան գրագետ է, որ չի կարող այդպիսի անգրագիտություն դրսկորել...: Մի՞թե ձեր հայերենի և ոստաերենի իմացությունն այնքան է, որ պարզ չի եղել ի. Մուրադյանի միտքը: Նրա «մեղքն» այն է, որ սատար է կանգնել արդարության, իր հայրենակիցների ազգային-ազատազրական պայքարին:

Դուք ձեր հարցադրույցում մեղադրում եք հայկական կողմին այն բանի համար, որ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1989 թ. դեկտեմբերի 1-ին Արցախի առգային խորհրդի հետ միասին համատեղ որոշում է ընդունել Հարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու մասին: Մի՞թե ձեզ համար պարզ չէ, թե ի՞նչու է նման որոշում բնդունվել: Օրինակը կենդանի է, որպեսզի Արցախն էլ հայկական նախիշների օրը շընկնի:

Վերջիվերջո, մի՞թե ձեզ, Հարիբ մուալիմ, պարզ չէ, որ արցախցիները տերիտորիայի կոիվ չեն անում. նրանց ձգտումը մեկն է՝ ապրել հայավարի, հայկական կյանքով:

Դուք ձեր հարցադրույցում ցանկանում եք վարկաբեկիչ խոսքեր ուղղել նաև նոր խորհրդարանի հասցեին, շեշտելով, թե Հայաստանում փոխվում են ղեկավարները, բայց «նացիոնալիզմը» շարունակվում է: Զարմանալի է ձեր մտածողությունը. դարաբաղցիները այլև չեն ուզում լինել Ադրբեջանի կազմում, և դուք դա անվանում եք հայ ժողովրդի ազգայնամոլություն. այդպես կարող է մտածել այն մարդը, որը զուրկ է ազգային մտածողությունից և որևէ ազգի պատկանելությունից:

Վերջում նշում եք, որ ադրբեջանական ժողովուրդն այն չէ, ինչ եղել է տասնյակ տարիներ առաջ, արթնացել է և ուժ ունի հակահարված տալու բռնոր նրանց, ովքեր կհանդիսնեն խախտել Ադրբեջանի սահմանները և կձգտեն թեկուզ մի թիզ հող պակել նրա տերիտորիայից: Ահա ձեր ուզմաշղունը հարցադրույցի հիմնական իմաստը:

Ոչ միայն ձեր, այլև Ադրբեջանի պարբերական մամուլի

շատ ելույթների մեջ այն միտքն է անցկացվում, թե Ղարաբաղը եղել և կմնա Աղբերջանի անբաժանելի մասնիկը, և ոչ չի կարող նրան տիրել ... եվ դրա համար էլ գիմում եք անմարդկային բոլոր միջոցներին: Չխորանանք, ափսոս, որ ձեր նմաններին ամբի՞ն է տրվում ամեն ինչ ասելու մի ժողովրդի հասցեին, որից շատ ու շատ բան սովորեցիք վերջին 70 տարում:

ԶԵՐԱԳԻՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԿԱՑՆՈՒՄ Է ԱԶԵԲԻՆԵՐԻՆ

1917—1923 թթ. Արցախի պատմության սև էջերից են: Արցախի շատ մտավորականներ, առաջին հերթին Հարություն Թումանյանը և Միրզա Տեր-Մարգարյանը, ձեռագիր աշխատանքներ են թողել իրենց արխիվներում և հարազատների մոտ, որոնցում ականատեսի աշքերով են ներկայացրել այդ ծանր ժամանակահատվածի իրադարձությունները Ղարաբաղում:

Օրերս ներկայացավ այդպիսի մի ասիթ. Միրզա Տեր-Մարգարյանի աշխատությունը՝ «Լեռնային Ղարաբաղ. 1917—1923 թթ.», ձեռագիր վիճակում խնամքով պահպանվել է իր թոռան՝ հանրապետության մշակույթի վաստակավոր գործիւ, բանաստեղծ, հայ գասական և ժամանակակից պոեզիայի ու արձակի թարգմանիլ Վրույր Բալասանի մոտ:

Ո՞վ էր Միրզա Տեր-Մարգարյանը: Նա ծնվել է 1868 թ. Շուշիում: Հիմնավոր կրթություն է ստացել. ավարտել է տեղի հայտնի թեմական դպրոցը, ակտիվորեն մասնակցել հասարակական-քաղաքական շարժումներին, զբաղվել մանկավարժությամբ: Աշխատանքին զուգընթաց, սկսած 1884 թվականից, կովկասահայ պարբերականներում (մասնավորապես «Նոր դարում», «Մշակում», «Հորիզոնում», «Ղարաբաղում» և այլ թերթերում) հանդես է եկել արձակ ստեղծագործություններով: 1914 թ. Շուշիում լույս տեսավ Միրզա Տեր-Մարգարյանի (գրական անուն՝ «Միտսար») գրական ժողովածուն՝ «Կաթիլներ» խորագրով: Ժամանակին մամուլը բարձր է գնահատել գրողի գրական-գեղարվեստական գործերը:

Միրզա Տեր-Մարգարյանը 1917—1923 թթ. ակտիվ աշխատանք էր կատարում Ղարաբաղում, մոտիկից գիտեր, թե ինչպիսի պայքար է տարվում հարեանների կողմից ուրիշի հողը

ոչ միայն յուրացնելու, այլև ժողովրդին ծնկի բերելու նպատակով:

Հեղինակը աշխատությունը ներկայացրել է երկու մասից. առաջինում նախախորհրդային Արցախն է բուռն թոհուրունով, երկրորդում խորհրդային կարգերի առաջին օրերն են:

Առաջին իսկ տողերից Միրզա Տեր-Մարգարյանը ընթերցողի ուշագրությունը կենտրոնացնում է Արցախի թեժ իրավիճակին, թե ինպիսի վայրագությունների են գիմում ազերիներն իրենց ծրագրերն իրականացնելու համար: Կոնկրետ նշվում են թուրք-աղերիների այն բարբարոս արարքները, որոնք արդեն մեկ օրում կրկնվեցին Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, և այլազուում...

Մանրամասնությամբ են տրված Ղարաբաղի հարցի ծագումը, Շուշիի գավառում գտնվող հայկական խոշոր գյուղերից մեկի՝ Ղարաղլաղի (այժմ՝ Բերդառողի) անկումը, Զամիլ Ջեյտի արշավանքները:

Զեռագրի աշխատության մեջ առանձին բաժնով է ներկայացվում Զորավար Անդրանիկի գործունեությունը Ղարաբաղում: Հեղինակը միանգամայն օբյեկտիվ դիրքերից է գնահատում զորագրի գործողությունները, ընդգծելով, որ նա ահեղ էր և անկուտրում միայն ու միայն իր ժողովրդի ոխերիմ թշնամիների նկատմամբ, բարի և խիստ մարդկային՝ բոլոր նրանց համեմատվում էին...

Հեղինակը նոր, զուսաբանված տվյալներ է հաղորդում Խոսրով-բեկ Սուլթանովի հայատյաց գործոնեությունից: Տիրահռչակ այդ բժիշկը նշանակվել էր Արցախի տեր ու տնօրեն մուսավաթական Աղբերձանի կողմից: Նա ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում իր ծրագրերն իրականացնելու համար: Նա կովկասահայ պարբերականներում (մասնավորապես «Նոր դարում») հանդես է եկել արձակ ստեղծագործություններով: 1914 թ. Շուշիում լույս տեսավ Միրզա Տեր-Մարգարյանի (գրական անուն՝ «Միտսար») գրական ժողովածուն՝ «Կաթիլներ» խորագրով: Ժամանակակին մամուլը բարձր է գնահատել գրողի գրական-գեղարվեստական գործերը:

Հեղինակն առանձին գլուխներով է տալիս 1920 թվականի մարտին տեղի ունեցած Շուշիի կոտորածը: «Ամեն ինչ պարզ էր, — գրում է աշխատության հեղինակը, — այրել, մոխիր դար-

Հընել հինավուրց և շքնաղ Շուշին, որպեսզի տեղի հայերը սատար չկանգնեն ամբողջ երկրամասին»: Հետո շարունակում է, որ Շուշին, փաստորեն, հայկական քաղաք էր, հայկական թագամասերում էին կենտրոնացած մշակութային և վարչական հիմնարկները, դպրոցները, թատրոնները, եկեղեցիները... աղերին էին գուր չէին գալիս հայկական մասի օրեցօր ծաղկումը, բարգավաճումը, պետք էր դրանք բոլորը կրակի բաժին դարձնել, որպեսզի նաև աշխարհը շիմանա, որ այստեղ հայեր են ապրել...

Ասկերանը միշտ էլ ուազմական թատերաբեմ է եղել արցախիների համար: Սակայն շատ անգամ են օտարերկոյաթշնամիներն իրենց վայրագ արշավանքները ձեռնարկել Ասկերանի վրա: Այն ժամանակավորապես ընկնում է, թեև աշուելի պարիսպ ուներ շորս կողմից: Այս նրա անկումն էլ իր լուսաբանումն է գտել հեղինակի սույն աշխատանքի մեջ:

Ողբերգական այդ ժամը տարիներին արցախահայերին իբ օգնությունն է բերում Դրոն: Նրա գործողությունների ներկայացմանը հատուկ բաժին է նվիրել հեղինակը:

Միրզա Տեր-Սարգսյանի «Լեռնային Ղարաբաղը, 1917—1923 թթ. «Ճեռագիր ծավալուն աշխատությունը ամբողջ հինգ տարվա արցախյան իրադարձությունների շնորհալի և գործիմաց շարադրանք է, որից հիմա էլ շատ-շատերը կարող են նյութ քաղել՝ լուս սփռելու մի շաղք կնճռու հարցերի լուսաբանման վրա»:

Զարմանալ կարելի է, թե հատկապես վերջին երեք տարում, արցախյան շարժման բուսն ժամանակահատվածում, ինչու անշարժ է մնացել այս շատ արժեքավոր աշխատությունը: Ժամանակը չէ, արդյոք, հրատարակել այն և ոչ միայն հայերն, այլև ոռոսերն ու օտար լեզուներով՝ ներկայացնելով նաև հեղինակի ով լինելը, նրա գործունեության համառոտ բնութագիրը:

ՀԱՅԻԵՎՆ ՈՒ ՄԱՄԵԴՈՎԸ ՄՐՅՈՒՄ ԵՆ...

Դեկտեմբերի 15-ը ոչնչով չէր տարբերվում մյուս օրերից... ժամը 13-ն է՝ «Խոսում է Մոսկվան»: Թուս հաղորդավարութիւնը

ինչպիսի քնքշանքով ու մելամաղձու ձայնով՝ է խոսքը տալիս Բաքվի իրենց թրթակցին՝ Հաջիկին..., թե ինչպիս է Աղրբեջանը դիմավորում նոր տարին: Ժողովրդական ճակատի այս ելուզակը բերանը բացում և փակում է միայն հայոցանքով՝ Դարաբարդի հայ ժողովրդի և Հայաստանի հասցեին: Ինչեր ասես, որ «աշքի ընկած» թղթակիցը չի ասում, օրինակ, որ «Ստեփանակերտի էքստրեմիստները չեն թողնում ընտրություններ անցկացնելու», «հայ գրոհայինները օր ու գիշեր հարձակվում են խեղճ ու կրակ աղբեջանցիների վրա», «Այրում, թալանում են», «Բաքվի հայերը անօրեն գրանցվում են Ստեփանակերտում և այլն, և այլն: Այստեղ են ասել՝ «Շուտ արա գողին բռնիր, որ քեզ գող շանվանեն»: Եվ ուսւ հաղորդավարութիւն նույն քընքը ըլլագանքով դիմում է թղթակցին: «Բայց չէ որ օրերս Աղրբեջանի դատախազ ընկեր Հաբիբովը և Հայաստանի դատախազ պարոն Գևորգյանը սահմանամերձ տարածքում հանդիպելով իրար, պարտավորվել են վերջ տալ ազգամիջյան թշնամանքին» (կարծես նրանք են սկսել, որ նրանք էլ վերջ տան ազգային թշնամանքին— Ս. Ա.): Եվ այսպիս, համամիութենական ուղիոն ոգեսորությամբ նոր տարվա «հաջողությունների» մասին խոսելու փոխարեն, նորից է բորբոքում երկու հարկանների առանց այն էլ շիկացած թշնամանքով... Հաջիկի բերանից կրկին ու կրկին հնչում են «հայ էքստրեմիստներ», «հայ գրոհայիններ», «հայ խառնակիներ» և այլ մերկապարանոց բառակապակցություններ, որոնք վաղուց կորցրել են իրենց ուժն ու նշանակությունը:

Երկուսն էլ՝ ուսւ հաղորդավարութիւն և թուրք թղթակիցը ինչպիսի՝ մտերմությամբ, սիրալիկությամբ են բաժանվում իշրաբից... մաղթելով իրար նոր հանդիպում:

Ի դեպ, թեև համամիութենական ուղիոն կեղծում էր, որ իրը ուղղակի կենդանի հաղորդում է, բայց ուսւ հաղորդավարը մատնում է այդ ամենը առաջարկելով այնպիսի հարցեր, որ սկսնակ ունկնդիրն անգամ զգում է գրանց շինծու լինելը:

Նույն դեկտեմբերի 15-ին համամիութենական «Ժամանակ» հեռուստատեսային ծրագիրը նոր անակնկալ է մատուցում աշխարհին՝ այս անգամ էլ ծանօթ Մայիս Մամեդովի բերանով՝ Աղրբեջանի սեփական թղթակիցը քանիերող անգամ «վկայում է», որ «հայերը հանգստություն չեն տալիս հարեւաններին», «Թուրք վիրավոր երեխաներ, ծերեր...» ,ապա կադրերը փոխ-

վում են. Մ. Մամեդովը հրապարակ է բերում բաքվեցի ոմն Առաքելովին, որին, ինչպես գրում է «Խորհրդային Դարաբաղը» 1990 թ. գեկտեմբերի 13-ի համարում, «Հայը ի լուր աշխարհի հայտարարել է՝ ես անհծում եմ քեզ, ապերախտ որդի, դատապարտում եմ քո ստոր ու ազգադավ արարքը... ես այլևս որդի չունեմ»։ Ի՞նչ նպատակ է հետապնդել թուրք լրագործը, ուն Առաքելովի բերանով ասել այն, ինչ ինքն է ցանկանում։ Եվ այս սադրիչ հայտարարությունները ԽՍՀՄ ժողովրդական պատգամորների 4-րդ համագումարի նախօրեին։ Մի օրում երկու «հաղորդում» համարիութենական ռադիոյով և հեռուստատեսությամբ՝ հայերի դեմ։ Այս քեզ երկիր, որ լայն քայլերով գնում է դեպի «միութենական պետության նորացման» (Մ. Գորակով)։

Դե ինչ, հարևան հանրապետության վայ-լրագորդները մըրցում են իրար հետ, թե ով ավելի խտացրած գուշներով կներկայացնի հայերի «վայրագությունները» հարևան «խեղճ» ժողովրդին նկատմամբ։

ԿԵՂԾԻՔԸ ՍԱՀՄԱՆ ԶՈՒՆԻ

(ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Բորիս Դադամյանի
առեանգման առքիվ)

Դեկտեմբերի 25-ին, օրը ցերեկով, Ստեփանակերտի օդանավակայանում «անհայտ անձինք» առևանգել էին Բորիս Դադամյանին, մի պատգամավորի, որի կրակոտ ելույթը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում մեծ արձագանք գտավ։ Նա խոսեց Արցախի անունից, արցախցիների սրտով, ճշմարիտ կերպով ներկայացնելով մարդի այժմյան վիճակը Աղբեղջանի տիրապետության օրոք։ Շատ-շատերի և, ինչ խոսք, առաջին հերթին հարևանների կողմից սրով ընդունվեց։

Հիշում եմ, ադրբեջանական մամուլը, հեռուստատեսությունը և ռադիոն հայոցանքով և վրիժառության մոլուցքով էին արձագանքում ժողովրդական պատգամավոր Բորիս Դադամյանի ելույթին։ Առանձին տպագիր օրգաններ ուղղակի սպառ-

նում էին նրան, բայց այդ բոլորը արցախցու համար ոչ մի նշանակություն չուներ, քանի որ նրա ապավենը արդարությունն է, ճշմարտությունը, մի բան, որ այժմ շատ դժվար է կամ ուղղակի անհնար է ձեռք բերել։

Եվ, ահա, տարի ու կես է անցել առաջին համագումարից և հարեւանները կ կատար են ածում իրենց վրեժը հայ պատգամավորի նկատմամբ... առևանգում են Բորիս Դադամյանին հայրենի հողամաս։

. Ամեն ինչ պարզ է. սակայն նրան և նրա նման խիզախներին հրաժարվելու իրենց պայքարից, մոռանալու Արցախի պրոբլեմը։

Այո՛, այդ օրը, գեկտեմբերի 25-ին «Լրաբերը» տիսուր լուր հաղորդեց, Ունկնդիրը շեր ուզում հավատալ...։ Բայց հաջորդ օրը, դեկտեմբերի 26-ին, «Ժամանակ» ծրագրով «Ազգերին ֆորմի» լրատվությամբ տեղեկացվեց, որ իրը առևանգումը կատարել են Բորիս Դադամյանի աշխատանքային ընկերները։ Ինչպիսի կեղծիք, մի՞թե մարդը ընդունակ է նման կեղծիք հորինելու։

Ինքը՝ Բորիս Դադամյանը, վրդավմունքով պատմում է ամբողջ եղելությունը այն մասին, թե ինչպես են հարևան թուրքերը, ոինքան պատասխանով, առևանգել իրեն։

Այդ մասին պատմում են նաև օդանավակայանի ուղևորները։ Կոնկրետ տվյալներով է խոսում նաև Բորիս Դադամյանի որդին՝ Միքայելը, «Խորհրդային Դարաբաղ» թերթի դեկտեմբերի 26-ի համարում։ Այլևս, ինչպես նկատում ենք, կեղծիքը թաքնելու եզրեր շեն մնում։ Բայց արի ու տես, «Ժամանակ» հեռուստածրագիրը ապերիների տեղեկատվությամբ որերորդ անգամ թող է փշում միլիոնավոր հեռուստաղիտողների աշքերին, փորձելով պնդել, թե այս անգամ էլ, ինչպես Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլուր, արյունահեղությունների համար մեղավոր են իրենք՝ հայերը։

Ես համոզված եմ, որ «Ժամանակ» ծրագրի միամիտ ունկնդիրները, բացի Արցախի և Հայաստանի հայերից, կարող են հավատալ այս կեղծ հաղորդմանը, սրտի խորքում էլ տեղեկացն իսպեքտ ուղղելով հայերի դեմ...։

Եվ երբ գեկտեմբերի 27-ին համամիութենական ուղիոյի և հեռուստատեսության Հայաստանի սեփական թղթակիցները թղթակցություն ներկայացրին Մոսկվա՝ Բորիս Դադամյանի անդամակայացրին հայերից անհնար է ձեռք բերել։

միջական խոսքը հաղորդելով ունկնդիրներին, կենտրոնը հրաժարվեց ցուցադրելու այն: Մենք համոզված էինք, որ Մոսկվան հաղիվ թե նման հաղորդում եթեր տա:

ԼԵՇՆ Ա.ՐՅԱՆԻ ԵՎ Ա.ԲՅԱՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայտնի է, որ նշանավոր պատմաբան, գրող և հրապարակախոս Լեռն (Առաքել Բաբախանյան) ծնվել է Արցախի նախկին կենտրոնում՝ Շուշիում, 131 տարի առաջ: Նրա գործունեության վրա անշնչելի հետք է թողել հայրենի քաղաքը, արցախյան ժողովրդի ուրուցն բնավորությունը:

Բառիս լայն իմաստով նա արցախցի էր՝ շատ լավ գիտեր հայրենի եքրամասը, մարդկանց իղձերն ու մտահոգությունները: Բազմավաստակ պատմաբանը տարբեր առիթներով հանդես է եկել պարբերական մամուլի էջերում՝ ուղղակի և անուղղակի կերպով բնութագրելով Արցախը, արցախցիներին: Արցախին նվիրված նրա բազմաթիվ նյութերի մեջ առանձնանուած է Շուշիում 1915 թվականից լուս տեսնող «Փայլակ» թերթի 1917 թվականի մարտի 9-ի, 12-ի, 16-ի, 23-ի և 26-ի համար ներում տպագրված «Ղարաբաղ և զարաբաղցիներ» ծավալուն հոգվածաշարը: Ի գեպ, այս հոգվածաշարը նրա այն դասախոսության շարադրանքն է, որ նա կարդացել է Թիֆլիսում 1917 թ. փետրվարի 8-ին՝ ղարաբաղցիների ազգագրական երեկույթին:

Հեղինակը անկեղծ գրուց է բացում ընթերցողների հետ, խոսում է պարզ ու շիտակ և բնութագրական փաստերով: Նա պատմական էքսկուրս է անցկացնում Ուտիքի, Արցախի և Սյոմիքի միջև, նշելով, որ դրանք մի ամբողջություն են կազմում, մի ներգաշնակություն, ոչ միայն մարդկային բնավորությունների, այլև բնության՝ տափական մասունքների, անտառապատճենների, անտառապատճենների, սարերի, ջրային ռեսուրսների առումով: Ուղղակի ասած, սրանք սահմանակից և համարնությ ազգագրորեն՝ արյունակից և տոհմակից նահանգներ են», — շեշտում է Լեռն:

Կանգ առնելով հատկապես Արցախի ընդհանուր բնութագրման վրա, մեծանուն հեղինակը գրում է. «Ղարաբաղը հայոց նոր պատմության մեջ կատարեց եղակի կարեռը գեր»: Նա հի-

շատակում է շատ երեելի մարդկանց, համավորապես արցախցի առաջին գրող Մովսես Կաղանակատվացուն, ապա Մխիթար Գոշին, ժողովրդական հերոս Զիվանշիր իշխանին, հաթերքցի Տեր-Հասան դորավարին և ուրիշների:

Լեռն իր խոսքը ավելի ամփոփ է դարձնում. Արցախը «այն քուրան էր, որի մեջ, առաջին անգամ մեր նոր ժամանակներում, կովեց ու կուիվեց ազգային կովի գաղափարը... Այս լեռնային աշխարհում էր, որ դարերով ստրուկ ապրած ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ էր ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԵԹՆՈՐՈՇՄԱՆ ԴՐՈՇԱԿԸ (ընդգծումն իմն է — Ս. Ա.): Եկ այս ոչ միայն զենքի ու խիզախ ոգորումների միջոցով: Շարժումն առաջացրեց և մի շատ խոշոր դրական երևույթից: Լեռն նկատի ունի ոչ միայն մարդկային արիությանն ու խիզախությունը, այլև տպագիր խոսքի ներգործության ուժը, ասելիքի անպայման ազգեցություն ունենալու հզորությունը, որը, ինչ խոսք, գերում է շատ սրտեր, մարդկային հոգիներ: Այս թե ինչու նաև մեծ տեղ է տալիս քաղաքական հրապարակախոսությանը: Լեռն գրում է. «Քաղաքական հրապարակախոսությունը մեղանում առաջին անգամ հանդես եկավ իբրև ծնունդ Ղարաբաղի ԱԶԱՏԱԴՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ, մի զարարացու ձեռքով»: Մեծ պատմաբանը նկատի ունի Մովսես Բաղրամյանին, որը ծնունդով արցախցի լինելով, իր գործունեությունը հիմնականում ծավալում է Հնդկաստանում, ակտիվ մասնակցություն ունենալով ոչ միայն առաջդիմական շարժումներին, այլև պարբերական մամուլի աշխատանքին: Նա առաջիններից մեկն էր, որ ազգային-ազատագրական շարժման ծավալմանը նպաստող ազգակներից մեկը համարում է կրքոտ հրապարակախոսությունը: Լեռն շարունակում է իր միտքը զարգացնել, նշելով. «Առաջին անգամ հայը (նկատի ունի Մովսես Բաղրամյանին — Ս. Ա.) մասնակից է գառնում եվրոպական արարամյանի զարգյալ Ղարաբաղի շարժումների ազգեցության տակ»:

Լեռն կարծես կինոժամապակենի պես տեսնում էր անցյալն ու ներկան, մի անգամ ևս ընդգծելով, որ արցախցան շարժումների հիմնարացը ազգային-ազատագրական պայքարին է: Այս առիթի միջնարացը ազգային-ազատագրական պայքարին է: «Մենք սովորում ենք քաղաքական իդեալ թով էլ լեռն գրում է. «Մենք սովորում ենք քաղաքական կառավագարձնել ծողովրդապետությունը, ներկայացուցչական կառավագարձնել զարգությանը, որպեսզի գործադրենք նրանց Ղարաբաղի ձեռքով պատված Հայաստանի մեջ»:

Լեռն ազատագրական պայքարի նախաձեռնման գործում առաջնություն է տալիս Արցախին, գտնելով, որ կյանքի բերումով արցախիներն են առաջինը ձեռնարկել քաղաքական պայքարը հայերի շրջանում։ Այս կապակցությամբ էլ նա «Ղարաբաղ և դարաբաղցիներ» հոդվածաշարում գրել է. «Ղարաբաղի ազատագրական շարժումները նախօրինակն էին այն բոլոր հետագա նույնանման շարժումների, որոնց ձեռնարկում էր հայ ժողովորդը բնական բերմունքի անողոք ստիպումներով, իր քաղաքական դրությունը բարվելու համար»։

Նա շեշտում, էր, որ ազգային ազատագրական պայքարի ընթացքում իր հարեւան և այլ թշնամիների գեմ մարտերում իտուշոր գոհեր է տվել Ղարաբաղը։ Անօրինակ էին արցախցիների շահնքերը իրենց հարազատ երկրամասը միշտ հայկական պահելու համար։ «Ղարաբաղը հերոսական ջանքեր էր անում իր հային ինքնօրինությունը պահպանելու համար։ Նա աշակին գոհեր տվեց, հայ ազգաբնակչության թվի սասափի նվազում ունեցավ կոտքածների ու գաղթականների հետևանքով»։

Արցախի ինքնուրույնության պահպանման գործում մեծ դեր էին խաղում Շուշիում գործող երկու առեւտրական տները։ Հարդումյանի և Թառումյանի գրասենյակները, որոնք հիմնվել էին դեռևս 1820-ական թվականներին։ Նրանք սերտ կապերի մեջ էին արտասահմանյան երկրների հետ։ Առեւտուրը մեծ աշխուժություն էր առաջցրել 40 հազարից ավելի հայ բնակչություն Շուշիում։

Ոչ միայն առեւտուրը, այլև գպրության, գրի և գրականության, արվեստի, մշակութային օջախների լայն ցանցի ըստցախի բնակչության աղքային-ազատագրական պայքարում։ Գործող հայոց թեմական գպրոցի գերը։ Հեղինակը ուղղակի կական տրամադրությունները։ Թեմական գպրոցն էր, վերջապես, որ երկար ժամանակ հանդիսացավ համարյա միակ մրցագեալների համար»։

Խոսք չկա, շարունակում է լեռն, որ ապագրվող գործերը, պարբերական մամուլի տարբեր օրդանները, թատերական հայութիւնական ներկայացումները մարդկանց ոգերում էին ու-

ժեղացնել պայքարը լավագույն գաղափարների իրագործման համար։ Ամեն մի լավ նախաձեռնություն, շեշտում է պատմաբանը, ունի իր գաստիարակիլ գերը։ Արցախում շատ էին նման կարեոր միջոցառումների անցկացումը՝ կյանքի գրեթե բոլոր ուրոտներում։ Ժամանակի հետ արցախցին ոչ թե կորցնում է իր ինքնությունը, այլ, ընդհակառակը, բազմապատկում է այն պահպաննելով իր նախնիների ամենավսեմ հատկությունները, բարեմասնությունները։ «Զափազանց զուտ, շափազանց կորպի, շափազանց խոշոր են նրա (այսինքն՝ Արցախի— Ս. Ա.) ազատագրական ինքնուրույնության գծերը։ Ուր կա զարաբաղցի, նրա հնտ ապրում է նրա պապենական մեծ ու հարուստ ժառանգությունը՝ զարաբաղցու բարբառը, ուժեղ, կոպիտ, ինչպես լեռնական մի ստեղծագործությունն, հյութեղ, իր առանձին, տարբեր համ ու հոտով...», — գրում է լեռն։

Մեծ մտածողը չի կարողանում թաքցնել իր հպարտությունը Ղարաբաղի ու զարաբաղցու, իր հայրենի եզերքի համար։ «Զնայած որ կյանքը անողորմ կերպով հողմահարվում է ամեն կողմից, զեռ հայրենի ժայռերի պես կանգնած են և ուժեղ այս ժողովրդի սովորությունները, ծեսերը, պաշտամունքները։ Ղարաբաղցին գեռ շարունակում է ապրել օջախի պաշտամունքի նախնական ձևերով...»։

«Ղարաբաղի ժողովուրդը... բանաստեղծ ժողովուրդ է, — շեշտում է լեռն, — և նրա բանաստեղծությունն էլ տեղայնության կնիք է կրում շատ ուժեղ շափերով... Եթե Ղարաբաղի հայ ժողովուրդն ուրիշ բան երգած էլ չինի, «Գութանի երգերը» բավական կլինեին, որ սխալ համարվեր այն կարծիքը, թե Ղարաբաղը շունի հայերեն բանաստեղծություն...»։ Եվ նա թվում է կոնկրետ անուններ։

Արցախի և արցախցու բարեմասնությունների մասին մեծ պատմաբանը խոսում է գայթակղիլ ոճով։ Նրա համար Արցախում ամեն ինչ հիսաքանչ է, անօրինակ, հյութեղ, հերոսական, անարատ, անզուգական...։ Եվ նա իր հոդվածաշարը ավարտում է հետեւալ եղբակացությամբ։ «...Հավատանք, որ այդ ժողովուրդը կորչի չի կորչի, որ նրա առջե ապագա կա»։

Պետք է միայն տալ նրան զարգացող և առաջադիմող մարդկության բոլոր միջոցները»։

Եվ երբ մի հայցը ենք ձգում մեծ պատմաբանի, գրողի ու հրապարակախոսի 74 տարի առաջ արտահայտած մտքերի վրա,

նորից ու նորից համոզվում ենք, որ Արցախի ժողովուրդը միշտ էլ վառ է պահել իր նախնիների ոգին՝ շմարելով ազգային-ազատագրական պայքարը լուսավոր ապագայի համար։ Այդ վկայեց նաև վերջին երեք տարիներին արցախցիների ամբողջ գործունեությունը։

Այսօր էլ այդ պայքարը նոր ուժով է դրսնորվում Արցախի հայ բնակչության շրջանում՝ աղատվել տառնյակ տարիների բնապետությունից, միանալ մայր Հայրենիքին, ի կատար ածել հայ ժողովրդի գարափոր իշճը՝ հիմնելու ազգային մի պետություն, որի տերն ու տիրակալը լիներ ինքը՝ ժողովուրդը։

Յլդպիսի նախադրյաներ արդեն ստեղծված են։ Հայաստանի Հանրապետության նոր կառավարությունը իր ընդունած Հռչակագրով սկսել է ազգային ինքնուրույն պետության ստեղծման գործընթացը։ Իսկ այդ գործընթացի, աղգային զարթոնքի ըսկրգենավորողները եղան աննկուն արցախցիները։ Եվ Հաղարանգամ իրավացի է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, երբ Ամանօրի առթիվ Արցախի ժրգովորդին հղած իր շնորհավորանքում գրել է. «Դուք եղաք Հայոց աղգային նոր զարթոնքի կարապետը, և այժմ մեր ողջ ժողովրդի պարտքն է երախտագիտությամբ հատուցել ձեր կրած զրկանքները և սատար կանգնել ձեր գերամարդկային սիրանքին»։

ԱՄԵՆ ԻՆՉ ՇՈՒՌ ՀԱՅԵԼՈՒ ՄԵԶ

(Թերելով «Վարան սասի» նորաբույգ թերքի համարներ)

1990 թվականից Բաքվում ուսւերեն և աղբբեշաներեն լույս է տեսնում «Վաթան սասի» («Հայրենիքի ձայն») պարբերականը՝ փախստականների աղբբեշանական ընկերության պաշտոնական թերթը։

Հենց թերթի պաշտոնական պատկանելությունը հուշում է, թե այն ինչ խնդիրների լուսաբանմանն է կոչված՝ որոնք են նրա արծարծած հարցերը, ովքեր պետք է նրա էջերում հանդիս գտն և այլն, և այլն։ Բայց արի ու տես, որ սլարբերականը փախստուն հիմնվել է ուրիշ նորանուրդ։ ապակողմնորոշել

բնթերցողներին հայ-աղբբեշանական հարաբերությունների մեջ, «չուցյա տալ», որ երկու հանրապետությունների արդի լարված վիճակում մեղավոր են միայն հայերը, որ «իսկզան կրակ» աղբբեշանցիները չեն էլ հասցնում պատասխան տալ հարևանների ասպատակություններին, հարձակումներին, սպանություններին, գողություններին...»

Հենց սկզբից երեսում է, որ նորաստեղծ թերթի գլխավոր խմբագիր թեյմուր Ահմադովը պրոֆեսիոնալ լրագրողի շատ քիչ փորձ ունի. դա ամենից առաջ վկայում է թերթի համարի ձեւավորումը, տառատեսակների նշանակումը, նյութերի տեղադրումը, երկրորդական փաստերի օգտագործումը, անհարկի կրկնությունները և այլն։ Բայց սա մի կողմէ։

Թերթի 1990 թ. գեկտեմբերի ծ-ի համարը բացվում է պատերազմի վետերաններ Փ. Ի. Երեմեկի, Ա. Վ. Արտեմեվի և զինված ուժերի վետերան Վ. Ե. Կոստոլոմովի՝ ԽՍՀՄ Պրեզիդենտ Մ. Աղբբալովին ուղղված բաց նամակով։ Ինչպես նկատեցինք, նամակի հեղինակները աղբբեշանցիներ չեն և աղբբեշանական մամուլը նման քայլերի հաճախ է զիմում։ Մեր կարծիքով նամակի ձեռագիրը աղբբեշանական է և այդ երեսում է տեղստի սկզբից մինչև վերջին տողը։ Ի՞նչ են գրում նրանք, այն, որ Սումգայիթը միայն պատասխան էր Ասկերանում սպանված երկու աղբբեշանցիների, Բաքվի հայերի փախստատը (ոչ մի խոսք չի ասվում Հանրապետության մայրաքաղաքում հայերի ջարդերի, սպանությունների, թալանի, վայրագությունների մասին) Հետեւանք է ավտոբուսներում, գնացքներում և այլուր հայերի վայրագությունների, և միայն Բաքվում երկու աղբբեշանցիների սպանությունից հետո ծայր առավ հայերի զանգվածային արտաքսումը։

Նամակի ոսւսալեղու հեղինակները այնպիսի տոնով են ասելիքը թղթին հանձնում, որ երկրի պրեզիդենտը մի ավելորդ անգամ սրտի ցավ զգա և քանիերորդ անգամ ցավակցի Բաքվում զոհված աղբբեշանցիների համար։

Զգիտես որտեղից են այն «փաստերը», թե «Հայաստանի գիտելիք» աղբբեշան մաքառում են «Մեծ Հայաստան» ստեղծելու առաջնորդները մաքառում են «Մեծ Հայաստան» ստեղծելու համար, որը կը բաղեցնի Աղբբեշանի, Վրաստանի, Թուրքիայի մի մասի և այլ տերիտորիաները։

«Քննադատելով» Հայաստանի ղեկավարներին, առանձին «առաջնորդների» պրեզիդենտ Գորբաչովին ուղղված նամակում

մերկապարանոց հայտարարություններ են, անհեթեթ բառակապացություններ և, ի՞նչարկե, վարկաբեկիչ արտահայտություններ: Տեղին է նշել, որ «էդալաթի» (արաբերեն նշանակում է՝ արդարություն) գլխավոր խմբագիր Աղիլ Մինքաշիկվը, նրա երկու տեղակալները և 17 հոգուց բաղկացած խմբագրական կույժիան ոչ մի նորմ չեն ճանաչում թերթի ձևավորման, նյութերի տեղադրման, տառատեսակների, գծերի և վերջազարդերի օդատագործման ուղղությամբ: Այդ առավելապես վերաբերում է «Էդալաթի» 1990 թ. գեկտեմբերի 6-ի համարին, որի գրեթե բոլոր էջերում տեղադրված նյութերը նմանվում են շափածո խոսքի, բանաստեղծական տողերի շարվածքի, բոլորը գրեթե միենույն տառատեսակներով խոշոր թափ տառերով, կարճ տողերով. այնպես որ շատ տեքստեր ուղղակի կարգախոսներ են, հարեւն հանրապետությանը վերաբերող թշնամական արտահայտություններ...: Ահա այս համարի մասին էլ ուղում ենք ասել մեր խոսքը:

Ի՞նչ նյութեր են զետեղված. ամենից առաջ ուշադրություն է գրավում առաջին և երկրորդ էջերում զետեղված Աղրբեշանի իրավաբանների միության նախագահ ի. Ալիկի բաց նամակը՝ հասցեագրված ՌիՍՖՀ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ Ա. Ա. Կովալենկու և ԽՍՀՄ իրավաբանների միության նախագահ Ա. Ա. Տրեբկովին:

Ընդարձակ այդ «նամակը» ի՞նչ «փաստեր» է բովանդակում: Ամենից առաջ այն, որ իբր հայ գրոհայինները գործում են ամենուր և հանգիստ շեն տալիս աղբեշանցի խաղաղասեր աղքաբանակշությանը, խախտում են ԽՍՀՄ և Աղրբեշանական ԽՍՀ սահմանադրությունները, անընդատ սաղրիչ քայլեր են անում և երկրի զեկավարությունը վճռական միջոցներ չի ձեռնարկում նրանց նկատմամբ:

Երկրորդ նշումը է, որ աղբեշանական ժողովուրդը արդեն ինչքան ժամանակ է, վնաս է կրում հարևանների կողմից: «Կոնկրետ թվերով» շեշտվում է, թե վերջին ժամանակներում ինչքան կորուստ են կրել աղբեշանցիները՝ և մարդկացին կյանքի, և նյութական տեսանկյունից: «Փաստերն» այնպիսին են, որ ներկայացնում են միայն մեկ կողմի՝ աղբեշանականի վնասները: Երեք-չորս անգամ ավելացված են մարդկացին կորուստները. եթե Աղդամ—Շուշի—Լաշին ճանապարհի ուղղու-

թյամբ ընդհարում է տեղի ունեցել, ապա սպանվել են 50—60՝ աղբեշանցի, վիրավորվել զրա կրկնակին, իսկ հայերի կողմից՝ սպանվել ընդամենը՝ 5—6 մարդ և ազն: Եվ այսպես «բաց» նամակում լիքն են «թվերն ու փաստերը», որոնք չեն կարող ընթերցնել վրա այն տպավորությունը շթողնել, որ ամենուր հայ գրոհայիններն են և նրանք գործում են աղատ, անարգել: Նամակի մի մեծ բաժինն այն հիմնական միտքն է արտահայտում, որ իրենք գժգոհ են երկրի զեկավարությունից, մասնաւորապես արեգիդենտ Մ. Ա. Գորբաչովից, որ շեն կենսագործում ընդունված որոշումները:

Սակայն Աղրբեշանի իրավաբանների միության զեկավարը ամենից շատ գժգոհ է այն բանից, որ կեռնային Ղարաբաղում, Շահումյանում, Գետաշինում և այլ հայաշատ տարածքներում մարդիկ շեն ենթարկվում հանրապետության զեկավարությանը, անհնազանդություն են հանդես բերում, խախտում են մարդու իրավունքները...: Լավ են մտածում, չէ՞ հարևան հանրապետության իրավաբանները, հայերին մեղադրելով անհնազանդության և մարդու իրավունքները խախտելու համար: «Մենք ստիպված ենք կեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը լուծարի և ներարկել, — գրում է իրավաբանների միության նախագահը, — փոխել նրա կարդավիճակը, հայերին դուրս հանել և կեռնային Ղարաբաղից, և Շահումյանի շրջանից, և Խանլարից ու Շուշիի հայկական գյուղերից»:

Բաց նամակը բաց տեղ չի թողնում. Ի. Ալիկը վրոպված է կենտրոնի անտարբերությունից և իր դեղատումն է առաջարկելու ուղին՝ մի ելք չկա. Հայերը խախտում են սահմանադրությունը, պետք է նրանց պատճել»:

«Էդալաթ» թերթի այդ նույն և այլ համարներում տպագրված են վիրավոր աղբեշանցիների նկարներ, որոնց ներքո շարված են վիրավոր աղբեշանցիների նկարներ, որոնց ներքո շարված է այն մասին, որ ամենաղեկանի ուղին՝ Շուշի—Աղդամը, և որ այդ ավտորին ուղին դարձել է Լաշին—Շուշի—Աղդամը, և որ այդ ավտորին աղբեշանցին վրա հայ գրոհայինները ամեն օր սպանում, վիճանապարհի վրա հայ գրոհայինները աղբեշանցիների, «անմեղ» բնակիչների:

Նախ, «Էդալաթ» թերթին պետք է վաղուց հայտնի լինի, որ երկու տարուց ավելի է աղբեշանցի գրոհայինների

մեղքով չի գործում այդ մայրուղին, երկրորդ՝ եթե սպանություն, գողություն լինում է, ապա միայն ու միայն հարեանների սապրանքներով: Հիշենք 1991 թ. Հունվարյան սկզբու Թերդածումն և նրա մերձակա փոքրիկ գյուղերում. ադրբեջանցի ելուզակները հողին հավասարեցրին փոքրիկ Մաղկաձորը, այրեցին տները, բնակիչները մի կերպ մաղապուրծ եղան:

«Էդալաթը» նշում է, որ Ադրբեջանի հանրապետության գլխավոր գատախազ հսմեթ Դափբովը գործ է հարուցել Ստեփանակերտի գրոհայինների նկատմամբ, որ իր նրանք են հրաժրում ազգամիջան ընդհարումներ:

Պարբերականը խոսեցնում է միայն ադրբեջանցիներին: Բայց մի բան պարզ է, որ արդարությունը պարզելու համար պիտք է լսել երկու կողմերին: Թերթը այս քայլին դիմում է՝ հետապնդելով մի նպատակ՝ վարկարեկել մարզի հայ բնակչությանը, նրա վրա դնել ընդհարումների ամբողջ մեղքը: «Էդալաթը» այնպիսի «Փաստեր», «օրինակներ» է բերում, որոնք կամ գոյություն չունեն, կամ դրանց չեղինակները հենց իրենք՝ ադրբեջանցի գրոհայիններն են:

Թերթը փորձում է իրեն դնել արդար դատողի դերում, այնունզ երկու տարուց ավելի է՝ չի գործում Ստեփանակերտ տառնող ավտոճանապարհը, երկաթգծով տեղափոխվող բեռները կամ թալանված, կամ ջարդված, փշրված են: Ի՞նչ վիճակում է Ստեփանակերտի օդանավակայանը, մարզի գյուղերի և շրջկենտրոնների միջև գոյություն ունեցող ավտոճանապարհները դադարել են գործելուց...: Եվ այս ամենի մասին արդարադատ «Էդալաթը» լուսում է:

Պարբերականը հակված է այն բանին, որպեսզի իր բողքներով թյուրիմացության մեջ գցի վերին ատյաններին և իր ընթերցողներին, ստեղծելու այն կարծիքը, թե Ադրբեջանի իրավապահ մարմինները պայքարում են արդարության համար, իսկ հայերը շարունակում են իրենց սադրիչ գործողությունները:

Այսո՛: «Էդալաթի» արդարությունը ադրբեջանական գործոնի օրինակ է, որը ոչ մի առնչություն չունի արդարության, ազնվության, օրինականության հետ:

Ադրբեջանի ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԽՈՍՈՒՄ է ԲԱՑԵՒԲԱՅ

(Թերթելով «Բակինսկի ուաբոչի» թերթի 1990 թ. դեկտեմբերյան համարները):

Տարբեր առիթներով ենք անդրադարձել «Բակինսկի ուաբողի» թերթի նյութերին, շեշտելով, որ սուսակեզու պարբերակաշչի» հայատյաց զիծ է վարում, ընթերցողների շրջանում ատելություն բորբքելով դեպի հարեան ժողովուրդը: Եվ դա ոչ միայն առիթից առիթ: Փորձեք թերթել նրա համարները, և շեք կարող գտնել մեկը, որտեղ այս կամ այն շափով խեղաթյուրված շինեն Արցախում կամ Հայաստանում կատարվող իրադարձյունները: Բոլոր նյութերի մեջ անցնում է մի գաղափար՝ չկա Արցախի պրոբլեմը, հայերն են մեղավոր, որ արտաքսվեցին Սումգայիթից, Բաքվից, Կիրովաբադից, Շուշիից...: Մեկը հարցնի ո՞րն է հայերի մեղքը. այն, որ կառուցեցին Սումգայիթը, բարեկարգեցին Բաքվում, Շուշիուն...:

Երկար տարիներ Ադրբեջանը (նույնիսկ հիմա էլ) պարձենում էր իր «հաջողություններով» և առաջին հերթին օրինակ բերում կենացին Դարաբաղը, ընդգծելով, որ այստեղ, հիրաբը բերդիկ աշխատասեր են, տաղանդավոր, ուկորդային բերք վիճակում խաղողից, թթի ծառերից, հացահատիկային և բանեն ստանում խաղողից, թթի ծառերից, հացահատիկային և բանագարաբուտանային կուլտուրաներից, անասնապահությունը զաջարաբուտանային կուլտուրաներից, անասնապահությունը էր որրաբաղցու տարեքն է և այլն: Ադրբեջանը հորջորջվում էր որրաբաղցու տարեքն է և այլն: Ադրբեջանը հորջորջվում էր որրաբաղցու տարեքն է և այլն: Ադրբեջանը համարակամության հանրապետություն:

Արցախի հայ ազգաբնակչությունը միշտ էլ զգացել է նման կարգախոսների սնանկությունը, որ իրականում Ադրբեջանի ղեկարգախոսների կավարությունը խտրականություն է հանդիս բերում, բարձիթողի կավարությունը հայկական մարզի ազգաբնակչության հոգսերը, վիճակում են հայկական մարզի ազգաբնակչության համար: Որ ոչ մի աշխատանք չի տարվում նրա զարգացման համար: Որ այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ: Մարզի կենտրոն Ստեղա այդպես է բերեմ միայն մեկ փաստ:

հերով, հեռուստատեսության մասին չենք խոսում։ Այս ամենը ես հիշեցի և վերապեցի, եթե կարդացի «Բակինսկի ուրոշի» թերթի 1990 թ. գեկտեմբերի 5-ի Համարում տպագրված «Կառուցել կամ պաշտպանվե՞լ» ծավալուն ինֆորմացիան «Լեռնային Ղարաբաղ» խորագրի ներքո։

Ինֆորմացիայի հեղինակը մեզ անծանոթ չէ, Ազերինֆորմի թղթակից եւ հմանովն է, որը միշտ էլ հանդես է գալիս պաշտոնական հաղորդումներով։

Թղթակիցը պատմում է, որ մի հեղինակավոր պատվիրակության ուղեկցությամբ Ստեփանակերտ է ժամանել Աղբեզմի նախարարների խորհրդի նախադաշտության շատան շատանով նպատակ ունենալով ծանոթանալ մարդի գյուղերին, Հաշվի առնել նրանց ջոգաերն ու մտաշոգությունները։ Եվ ինչ, Հանրապետական թղթակցին երկրորդ գեկավարը հիացած է նոր ձեռքերումներով, որ շատ կարծ ժամանակում հասել է մարդի աղբեզանցի ազգաբնակությունը։ Հ. Հասանովը այցելել է միայն աղբեզանարբնակ վայրերը։ Նրան հատկապես ուրախացրել են Խոջալուի, Մալիբեյլիի, Շուշիի և ուրիշ գյուղերի ու քաղաքների բնդարձակումն ու բարեկարգումը։ Նա ուղղակի նշել է, որ կառուցղական աշխատանքների ծավալը աղբեզանաբնակ վայրում մեծացել է 15—20 անգամ և այս վեցին ամիսներին աշնքան աշխատանք է կատարվել, որ շի եղել անցած տասնամյա կների ընթացքում։

Հիացած այդ հաջողություններով՝ Աղբեզանի կառավարության նախագահը, դիմելով աղբեզանցիներին, բացականշել է։ «Ուսուով կունենաք քաղաքատիպ ավաններ՝ «Նոր Դարաւար», «Նոր Մալիբեյլի» «Նոր Խանքենդ», «Նոր Շուշա» և այլն։

Այս նշանակում է, բացատրել է նախարարների խորհրդի նո խագահը, որ Աղբեզանի ղեկավարությունը ոչինչ չի խնայում Ղարաբաղի ազգագրական քարտեղը փոխելու աղբեզանցիների օգտին։

Ազերինֆորմի թղթակցի տվյալներին պատասխանելով, Աղբեզանի կառավարության նախագահը ուղղակի հայտարարել է։ «Մենք պետք է գուգահեռաբար զբաղվենք երկու պրոբլեմով՝ մարդկանց կյանքի պայմանների բարեկազմամբ և նրանց անվտանգության ապահովմամբ։ Դրա համար մենք մշակել ենք առաջարկությունների և միջոցառումների մի ամբողջ ծրարժ

ժանապարհորդության ընթացքում համոզվեցի, որ ընդունված որոշումները ամբողջովին կենսագործվում են։»

Ազերինֆորմի թղթակցի հացական խոսքեր է ուղղում հատկապես Խոջալուի, որը մի քանի տարի առաջ ուշնչություն էր, բաղկացած մի քանի տասից, իսկ այսօր այն ներկայացնում է իրեկ քաղաք, որտեղ կան աշխատելու բոլոր կայացնում է իրեկ քաղաք, որտեղ կան աշխատելու բոլոր կայացնում է իրեկ քաղաք, ակումբ, մշակութի տուն, գործարանի մասնաճյուղ, կենցաղի տուն և այլն։ Ամբողջովին գաղիքիացված է Խոջալուն, ապահովված է Հեռախոսակապով, ռաֆիկացված է Խոջալուն, ապահովված է Հեռախոսակապով, ռադիոն և Հեռուստատեսություննը մուտք են գործել յուրաքանչյուրի բնակարանը։

Խոջալուի օրինակին են հետևում Զամիլուն, Մալիբեյլին, Քյոսալարը և մյուս գյուղերը, որտեղ բնակիչները գերազանցապես աղբեզանցիներ են։

Թերթը գրում է, որ կատարվածը դեռ չի բավարարում, որից են նոր բնակարաններ ոչ միայն Հայաստանից փախածներին։ Եվ օրինակներ է բերվում, թե յուրաքանչյուր գյուղի հանդարձակումն ու բարեկարգումը։ Նա ուղղակի նշել է, որ կառուցղական աշխատանքների ծավալը աղբեզանաբնակ վայրում մեծացել է 15—20 անգամ և այս վեցին ամիսներին աշնքան աշխատանք է կատարվել, որ շի եղել անցած տասնամյա կների ընթացքում։

«Դժվար ճանապարհներ Ղարաբաղում» ինֆորմացիայի մեջ (գեկտեմբերի 23, 1990 թ.) Ազերինֆորմը նշում է, որ Աղբեզանի կառավարությունը բոլոր միջոցները ձեռնարկում է, որպես նի մարդի աղբեզանաբնակ դյուղերը իրար հետ կապված լինեն ոչ միայն Հեռախոսակապով, այլև բարեկարգ ճանապարհներով։ Այստեղ էլ ինֆորմացիայի պաշտոնական գործակալությունը չի խոսափում շեշտել, որ իր «մարդի հայ է քատրին» հանգիստ շեն տալիս խաղաղասեր աղբեզանցի միստները կատարելու իրենց ամենօրյա գործը»։

Թերթը մի կողմից գովում է, որ Աղբեզանի կառավարությունը ոչինչ չի խոսյում Ղարաբաղի աղբեզանցի բնակչությունը ունեցող գյուղերը ընդարձակելու և բարեկարգելու ուղղությունը էլ առիթը բաց չի թողնում վարկապությամբ, մյուս կողմից էլ առիթը բաց չի թողնում վարկապությամբ, մյուս կողմից էլ առիթը բաց չի թողնում վարկապությամբ, թե բեկելու հարևաններին, «մերկացնելու» հայ գրոհայիններին, թե իր նրանք գործում են ամենուր իրենց սագրիչ վարքագծով։

Իշարկե, զարմանալ չի կարելի, որ թերթի ոչ մի հաղորդական վարմանակ չի կարելի, որ Արցախը մեջ բառ անգամ չի գրվում այն մասին, թե Արցախը ության մեջ առաջարկությունների ինչպիսի վայրագություններ են կատարել բոլոր շրջաններում ինչպիսի վայրագություններ են կատարել

րում միլիցիայի հագուստ հաղած աղբբեզանցի ելուղակները, որոնք ամեն օր հարձակումներ են գործում Բերդաձորում, Քարինտակում, Շուշիի մյուս հայկական գյուղերում, Ստեփանակերտի օդանավակայանում...:

«Բարեկինսկի ռաբուխն» հայատյացության մեջ ոչ մի սահման չի ձանաշում:

Վ. Պ. ՊՈԼՅԱՆԻԶԿՈՒՆ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ Է» ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԶԵՎԵԲ

Բարեկում լույս տեսնող «Վիշկան», որը մի ժամանակ քաղաքային թերթ էր, իսկ այժմ՝ Աղբբեզանի կոմունիստական կուսակցության հանրակական-քաղաքական պաշտոնական օրգանը, հաճախ է անդրադառնում Արցախի իրադարձություններին, միշտ կովան դարձնելով «Հայ զրոհայինների հարձակումը», «Հարևանների խժդությունները», «Դարաբաղի Հայ բնակչության սադրանքները» և այլն։ Շատ ժամանակ էլ այդ թերթը, փոխանակ լուսարաններու հանրապետության առօրյան, նրա բարդ իրազրությունը, մարդկային հարաբերությունները, ծավալուն տեղ է հատկացնում այն նյութերին, որոնք ապակողմնորոշում են ընթերցողներին, իրականությանը անհարիր «փաստերով» և «օրինակներով» ձգտում «ապացուցել», որ Արցախի հայերի պահանջն անհեթեթություն է, մտացածին։ Շատ ժամանակ էլ թերթը միևնույն բանին անդրադառնում է մի քանի դրանով իսկ մարդկանց աշքին թող վիշելու, որ իր տպագիր օրգանը հետևողականություն և սկզբունքայնություն է հանդես բերում բարձրացված հարցի նկատմամբ։

«Վիշկայի» 1991 թվականի հունվարի 10-ի և 12-ի համար-ներում միևնույն վերնագրով («ՂԴԻՄ. ընդհանուր ուժերով լուծել կայացվում է վերջին մեկ տարում կեռնային Դարաբաղում հանրապետական կազմկոմիտեի կատարած աշխատանքը») տպագրված մեծ ու փոքր ինֆորմացիաներում ներկայացվում է վերջին մեկ տարում կեռնային Դարաբաղում հանրապետական կազմկոմիտեի կատարած աշխատանք պոլյանիշկոյի գլխավորությունը Վ. Պ. Պոլյանիշկոյի գլխավորությամբ։ Ինֆորմացիան տրվում է հանրապետության պրեզիդենտի նախաձեռնությամբ Հրավիրված խորհրդակցությունում, որին մասնակցում էին հանրապետության իրավապահ մարմինների, ներքին գործերի, ՊԱԿ-ի և այլ

նախարարությունների ղեկավարներ, պատասխանատու աշխատողներ։

Հաղորդումով հանդես է գալիս Վ. Պ. Պոլյանիշկոն, մի անձնավորություն, որի մեծ ու փոքր ձեռնարկումները ելնում են մարզի աղբբեզանցիների շահերից։ Նրա առաջին միտքն այն էր, որ Արք տարի է, ինչ մարզի Հայ բնակչությունը ոտքի է ելել պատերազմի մի բանի համար, որը ամբողջովին մտացածին է, աղքայնամոլական պոռթկում և ուրիշ ուժն։ Նա սխալ է համարում այն, որ երեք տարի Ղարաբաղը դուրս է մնացել Աղբբեզանի կառուցվածքից, և սա պիտի համարել նաև Աղբբեզանի ղեկավարության ու կենտրոնի բացը։

